

Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒ Մ Ե Մ

ՀՀ կրթության և գիտության

նախարար՝

Ս. Աշոտյան

«-----» ----- 2009թ.

ՀՀ պետ. գրանցման թ. -----

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Մասնագիտությունը՝ 310511–Կենսագործունեության անվտանգությունը և
անվտանգությունը արտակարգ իրավիճակներում

Որակավորման աստիճանը՝ Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր

Ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

1. 310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. 310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ. գոստոսի 30-ի թիվ 1038-Ն որոշմամբ:

1.2. Շրջանավարտի որակավորումը՝ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավր

310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետը 4 տարի 8 ամիս է:

1.3. Շրջանավարտի որակավորման բնութագիրը.

310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝

1. ենթասպա և սպա (քաղ. պաշտպանության, փրկարարական և հակահրդեհային գնդերում),
2. քաղ.պաշտպանության գծով մասնագետ մարզպետարաններում, նախարարություններում, ձեռնարկություններում և հիմնարկներում
3. աշխատանքի անվտանգության գծով ճարտարագետ ձեռնարկություններում, խոշոր ֆերմային տնտեսություններում, ինչպես նաև Պետական վերահսկող կազմակերպություններում (Պետլեռտեխնոլոգիայի, Պետավտոտեխնոլոգիայի, Ավտոպետտեսչություն, ՀՀ դատախազության և ՀՀ ներքին գործերի դեպարտամենտի տեխնիկա - փորձաքննական լաբորատորիաներ և այլն),
4. “Կենսագործունեության անվտանգություն” առարկայի ուսուցիչ և դասատու միջնակարգ դպրոցներում և քոլեջներում,
5. տեսուչ սոցիոլոգիական ուղղվածություն ունեցող կազմակերպություններում:

1.3.1. Մասնագիտական գործունեության բնագավառը.

310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությունը առնչվում է գիտության (տեխնիկայի, տեխնոլոգիաների, կառավարման և այլն) այն բնագավառին, որը ներառում է մարդկային գործունեության եղանակների, միջոցների և մեթոդների այն ամբողջությանը, որն ուղղված է.

- Մարդու արտադրական գործունեության և հանգստի գոտիների բնակավայրերում կոնֆորտային (նորմերին համապատասխան) վիճակի ստեղծմանը,
- վնասակար ազդեցություններից մարդուն և շրջակա միջավայրը պաշտպանելու միջոցների մշակմանը և իրագործմանը,
- շինարարական օբյեկտների, տեխնիկայի, տեխնոլոգիական գործընթացների նախագծմանը և շահագործմանը՝ համաձայն անվտանգ և էկոլոգիական պահանջների,
- օբյեկտների և տեխնիկական համակարգերի գործողության կայունության ապահովմանը սովորական և արտակարգ իրավիճակներում,
- վթարներից, բնական և տեխնածին աղետներից պաշտպանվելու և դրանց հետևանքները վերացնելու վերաբերյալ որոշումների ընդունմանը,
- վտանգավոր և վնասակար ազդեցությունների զարգացման նախագուշակմանը և դրանց արդյունքների գնահատմանը:

1.3.2. Մասնագիտական գործունեության օբյեկտները հանդիսանում են՝

արտադրական ձեռնարկությունները, գիտական, կրթական, նախագծային հաստատութ-

յունները, գյուղացիական և գյուղացիական կոլլեկտիվ տնտեսությունները, արտակարգ իրավիճակների գոտիները, տարածքները, որտեղ առաջանում են տարբեր ձևի վտանգներ:

1.3.3. Մասնագիտական գործունեության տեսակները.

310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված հիմնարար և մասնագիտական պատրաստությանը համապատասխան կարող է կատարել մասնագիտական գործունեության հետևյալ տեսակները՝

- կազմակերպչա-կառավարչական;
- շահագործական;
- մանկավարժական;
- գիտա-հետազոտական:

1.3.4. Մասնագիտական գործունեության ընդհանրական խնդիրները.

310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը կախված մասնագիտական գործունեության տեսակից, պետք է պատրաստ լինի լուծելու հետևյալ մասնագիտական խնդիրները.

ա/ կազմակերպչա-կառավարչական՝

- իրագործել պոտենցիալ վտանգ կազմող էկոնոմիկայի օբյեկտների և մարդկանց բնակավայրերի դիտարկում;
- համագործակցել արտակարգ իրավիճակներում պաշտպանությամբ, էկոլոգիական և արտադրական անվտանգությամբ զբաղվող պետական ծառայությունների հետ,
- կազմակերպել աշխատանքի պաշտպանությունը արտադրական ձեռնարկություններում և տարբեր հաստատություններում,
- կազմակերպել և անցկացնել բանվորների, ծառայողների և ղեկավար կադրերի ուսուցումը անվտանգության տեխնիկայի և արտակարգ իրավիճակների վերաբերյալ,
- կազմակերպել փրկարարական աշխատանքներ, վերացնել արտակարգ իրավիճակների հետևանքները:

բ/ գիտա - հետազոտական՝

- կատարել վտանգավոր և վնասակար գործոնների վերլուծությունը մարդու աշխատանքային պայմաններում, կենցաղում և շրջակա միջավայրում, Ինչպես նաև տեխնիկական համակարգերի ուսումնասիրությունը:

գ/ շահագործական՝

- Իրագործել վթարները կանխող տեխնիկայի և սարքավորումների շահագործման կազմակերպումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը,
- սահմանել վթարա-փրկարարական տեխնիկայի պահապանման կարգը, պահպանման և տրանսպորտավորման ժամանակ, ինչպես նաև շահագործման բարդ պայմաններում,
- իրագործել պլանավորում, հաշվառում և ստուգում՝ վթարա-փրկարարական տեխնիկայի շահագործման գծով,
- պահպանել պատրաստական վիճակում անհատական և կոլլեկտիվ պաշտպանության միջոցները:

դ/ մանկավարժական՝

- դասավանդել “Կենսագործունեության անվտանգություն” առարկան միջնակարգ և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

1.3.5. Որակավորման պահանջները

Մասնագիտական խնդիրները լուծելու նպատակով ճարտարագետ-բակալավրը կատարում է հետևյալ գործառնությունները՝

1. Իմանա ՀՀ սահմանադրության հիմունքների, ՀՀ աշխատանքի, ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ արտակարգ իրավիճակների օրենսդրությունը և այլն, կենսագործունեության անվտանգությանը, վերաբերող, պետական մարմինների կողմից ընդունված որոշումները:

2. Տիրապետի բնության իմացության ժամանակակից գիտական մեթոդներին մասնագիտական խնդիրներ լուծելու ընթացքում:

3. Տիրապետի աշխատանքի կազմակերպման գիտական հիմունքներին, ինչպես նաև նրա մասնագիտական գործունեության ընթացքում տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման համար կիրառվող համակարգչային մեթոդներին:

4. Մասնագիտական խնդիրների լուծման ընթացքում կարողանա ձևակերպել նպատակը և խնդիրները, որոնց իրագործման համար օգտագործի իր կողմից ուսումնասիրած գիտությունները:

5. Իմանա էկոնոմիկայի օբյեկտներում աշխատանքի պաշտպանության կազմակերպման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում անվտանգությունը ապահովելու սկզբունքները:

6. Տիրապետի կրթության և մշակույթի որոշակի մակարդակի իր մասնագիտական պարտականությունները արդյունավետ կատարելու համար:

- Մասնակցի Կենսագործունեության անվտանգություն մասնագիտական խնդիրների առաջադրման, ծրագրերի կազմման լուծմանն ուղղված աշխատանքների բոլոր փուլերին,
- Կազմակերպի նյութերի, միջոցների, սարքավորման, տեխնոլոգիական գործընթացների արդյունավետ օգտագործման գործառնություններ,
- մասնակցի Կենսագործունեության անվտանգություն գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և արդյունքների մշակման բոլոր փուլերին,
- ուսումնասիրի Կենսագործունեության անվտանգություն առնչվող մասնագիտական գրականությունը և գիտատեխնիկական ինֆորմացիան, ծանոթ լինի բնագավառի գիտատեխնիկական նորույթներին և նվաճումներին,
- օգտվի Կենսագործունեության անվտանգություն տեղեկատվական տեխնոլոգիաներից, տվյալների բազաներից, փորձագիտական համակարգերից և կիրառական ծրագրերի փաթեթներից,
- կազմակերպի իր ենթակայության ստորաբաժանման աշխատանքը:

7. Կարողանա վարել մասնագիտական գործունեությունը օտարերկրյա միջավայրում.

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը պետք է ծանոթ լինի՝

- իր մասնագիտական գործունեության բնագավառին առնչվող իրավական ակտերին, որոշումներին, կարգադրություններին, մեթոդական և նորմատիվային նյութերին,
- գործող չափորոշիչներին, բնագավառի սարքավորման, ինֆորմատիկայի միջոցների տեխնիկատնտեսական ցուցանիշներին, տեխնոլոգիաներին, դրանց շահագործման կարգացույցներին,
- գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքով ստացված տվյալների ներկայացման, հաշվետվությունների և տեխնիկական փաստաթղթերի կազմման եղանակներին,
- աշխատանքային օրենսդրության հիմունքներին, աշխատանքի պաշտպանության նորմերին և կանոններին:

1.3.6. Մասնագիտական հարմարման հնարավորությունը.

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը կարող է հարմարվել հարակից մասնագիտական գործունեության հետևյալ տեսակներին՝ հրդեհային պաշտպանություն, տեխնոլոգիական գործընթացների և արտադրությունների անվտանգություն, շրջակա միջավայրի ճարտարագիտական պաշտպանություն (գյուղ. արտադրություն), էկոլոգիական փորձաքննություն և բնօգտագործում:

1.4.Շրջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը

310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած ճարտարագետ-բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի որակավորման աստիճան 2-րդ - մասնագիտության գծով;

- մագիստրատուրայում՝ ներքոհիշյալ մասնագիտությունների գծով

- հակահրդեհային պաշտպանություն
- տեխնոլոգիական պրոցեսների և արտադրությունների անվտանգություն,
- էկոլոգիական անվտանգություն
- կենսագործունեության անվտանգությունը տեխնամթնոլորտում,

- ասպիրանտուրայում (միայն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո)՝ ստանալու գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2.Գիմորդի պատրաստականության մակարդակին ներկայացվող պահանջները

2.1.Գիմորդի նախորդող կրթական մակարդակը՝
միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն:

2.2.Գիմորդը պետք է ունենա՝

պետական նմուշի վկայական միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության, կամ միջին մասնագիտական կրթության, կամ նախնական մասնագիտական կրթության մասին, որում կա գրառում դիմորդի միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն ստանալու մասին, կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին:

3. 310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրին ներկայացվող ընդհանուր պահանջները

3.1. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը մշակվում է սույն պետական կրթական չափորոշիչով և ներառում է՝

մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

3.2. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններին և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշիչով:

3.3. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը ձևավորվում է հանրապետական, բուհական, ուսանողի կողմից ընտրովի և ֆակուլտատիվ բաղադրիչների դասընթացներից:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում բովանդակորեն պետք է լրացնեն հանրապետական բաղադրիչում նշված դասընթացները:

3.4. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը պետք է նախատեսի հետընթաց կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների ուսումնասիրումը՝

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսական ՝ ՀՄՏ;
- ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական ՝ ԸԲ;
- ընդհանուր մասնագիտական ՝ ԸՄԳ;

մասնագիտացման՝ ՄԳ;

Ֆակուլտատիվ՝ Ֆ;

ինչպես նաև եզրափակիչ պետական որակավորումը:

3.5. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բուհական բաղադրիչի բովանդակությունը պետք է ապահովի շրջանավարտի պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված որակավորման բնութագրի համաձայն:

Բուհական բաղադրիչում ընդգրկված դասընթացները երաշխավորական բնույթ են կրում:

4. 310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությանը տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնին ներկայացվող պահանջները

Դասընթացների անվանումը և նրանց հիմնական բաժինները

*ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ*

Հանրապետական բաղադրիչ

1. Ֆիզիկական կուլտուրա - 136 ժամ

Ֆիզիկական կուլտուրան ուսանողների ընդհանուր կուլտուրական և մասնագիտական պատրաստվածության գործընթացում: Նրա սոցիալ կենսաբանական հիմքերը: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես հասարակական երևույթներ:

Հայաստանի հանրապետության օրենսդրությունը ֆիզիկական կուլտուրայի մասին: Անհատի ֆիզիկական կուլտուրան:

Ուսանողի առողջ կենսակերպի հիմքերը: Աշխատունակության օպտիմալացման նպատակով ֆիզիկական կուլտուրայի միջոցների օգտագործման առանձնահատկությունները:

Ընդհանուր ֆիզիկական և հատուկ պատրաստությունը ֆիզիկական դաստիարակության համակարգում:

ՍՊՈՐՏ. Սպորտի կամ ֆիզիկական վարժությունների համակարգի անհատական ընտրություն:

Ուսանողների մասնագիտական– կիրառական ֆիզիկական պատրաստություն: Ինքնուրույն պարապմունքների մեթոդիկայի հիմունքները և սեփական օրգանիզմների վիճակի ինքնավերահսկումը

2. Հայ ժողովրդի պատմություն-4 կրեդիտ-120 ժամ

Պատմական գիտության էությունը, մեթոդները: Առարկայի պարբերացումը, ուսումնասիրության մեթոդները: Հայ ժողովրդի ծագումը և կազմավորումը:

Հին հայկական պետության կազմավորման ու զարգացման փուլերը: Արարատյան թագավորության կազմավորումը և անկումը /9-6-րդ դդ.մ.թ.ա./: Երվանդունիների / հայկազյան/ համահայկական պետությունը: Արտաշեսյան արքայատոհմի հաստատումը և Արտաշես 1-ին քաղաքական գործիչը: Տիգրան Մեծ: Արտաշեսյան արքայատոհմի անկումը և Արշակունիների արքայատոհմի հաստատումը: Հին հայկական մշակույթը: Արշակունիների անկումը, Հայաստանի բաժանումները: Քրիստոնեության ընդունման ու հայոց գրերի գյուտը որպես ազգի գոյապահպանության կռվաններ:

Հայ ժողովրդի պայքարը հանուն անկախության վերականգման 5-9-րդ դարերում: Բագրատունիների թագավորության հիմնումն, ամրապնդումը, վերելքը և անկումը: Սելժուկ-թուրքերի արշավանքները և Ջաքարյանների իշխանությունը: Կիլի-

կիսային Հայկական պետությունը /11-14-րդ դդ./: Հայ ազատագրական շարժումները 16-18-րդ դդ.: Հայաստանի 1-ին և 2-րդ բաժանումները Պարսկաստանի և Թուրքիայի միջև: Ազատագրական պատերազմներն Արցախում և Սյունիքում 1720-ական թվ. և դրանց վախճանը: Հայաստանի ազատագրության ծրագրերը: Հայկական մշակույթը 15-18-րդ դարերում:

Հայաստանը 19-րդ դ.առաջին կեսին: Ռուս-պարսկական պատերազմները և Արևելյան Հայաստանի նվաճումը Ռուսաստանի կողմից: Ռուս-թուրքական պատերազմները և Հայաստանը:

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրությունը 19-րդ դարի երկրորդ կեսին: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի միջազգայնացումը: Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը: Արևմտահայերի զանգվածային կոտորածները 1895-1896 թթ.:

Հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին: հայոց ցեղասպանության թուրքական ծրագիրն ու իրագործման փուլերը: Մեծ եղեռնը: 1917թ. փետրվարյան, հոկտեմբերյան հեղափոխությունները և Հայաստանը:

Հայաստանի առաջին հանրապետությունը /1918-1920թթ./: Հանրապետության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակույթային կյանքը: Սևրի պայմանագիրը: Թուրք-հայկական պատերազմը: Հանրապետության անկումը:

Հայաստանի խորհրդային հանրապետությունը 1920-1940թթ.: Հանրապետության սոցիալ-տնտեսական, հասարակական, քաղաքական կյանքը:

Հայ ժողովուրդը երկրորդ աշխարհամարտի տարիներին: Հայ ժողովրդի մասնակցությունը պատերազմին: Պատերազմի ավարտը: Հայկական հարցը Պոտսդամի կոնֆերանսում: Հայաստանի խորհրդային հանրապետությունը 1945-1991թթ.: Երկրի տնտեսության վերականգնումը: Հայաստանը խորշոյվյան բարենորոգումների, բրեժնեվյան հասարակական-քաղաքական կյանքի լճացման և գորբոշովյան վերակառուցման քաղաքականության տարիներին:

Հայաստանի Հանրապետությունը 1991-2003թթ.: ԽՍՀՄ փլուզումը: Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումը: Հողի սեփականաշնորհումն ու ձեռնարկությունների ապապետականացումը: Անցումը շուկայական հարաբերությունների: Արցախյան հիմնահարցը: Հայրենիք սփյուռք կապերը: Հայկական մշակույթը:

3. **Հայոց լեզու և հայ գրականություն-4 կրեդիտ-120 ժամ**

Լեզվի հիմնական գործառնությունները. լեզուն որպես մարդկային մտածողության արտահայտման ու մտքերի ձևավորման միջոց, որպես հաղորդակցության միջոց, որպես մշակութային արժեքների ստեղծման, պահպանման ու կուտակման միջոց, որպես հասարակական-քաղաքական միտումների կրող:

Աշխարհի լեզուները և լեզվաբնույթները, հայոց լեզվի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում:

Հայոց լեզվի զարգացման պատմական շրջանները /գրաբար, միջին հայերեն, ժամանակակից հայոց լեզու՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ/: Հայոց գիրը և գրչությունը: Մեսրոպյան այբուբենի ստեղծման համագալսի պատմական նշանակությունը:

Ուղղագրության, կետադրության և ուղղախոսության ժամանակակից համակարգերը որպես գրավոր և բանավոր խոսքի կարևորագույն չափանիշներ:

Խոսքի կուլտուրայի հիմքերն ու բաղկացուցիչները. ոճաբանություն և ճարտասանական արվեստի հիմունքները:

Ժամանակակից հայերենում ոճի հիմնական տեսակների բնութագրումը. գործառնական, իրադրական և անհատական ոճեր:

Գործառնական ոճեր:

Առօրյա խոսակցական ոճի ընդհանուր բնութագիրը: Գրական լեզվի ներկա վիճակի և նրա հետագա զարգացման ընթացքի առումով առօրյա խոսակցական ոճի ազդեցության դրական և բացասական միտումները: Ժամանակակից հայոց գրական լեզվի անադարտության պահպանման հիմնական խնդիրները: Գիտական ոճի ընդհանուր բնութագիրը: Գիտական և կրթական-ուսումնական ոլորտների գործունեության լեզվական-խոսքային չափանիշները:

Վարչագործարարական ոճի ընդհանուր բնութագիրը: Վարչատնտեսական, օրենսդիր, օրինաստեղծ և պետական կառավարման, ինչպես նաև քաղաքական, մի-

ջազգային, դիվանագիտական ոլորտներում կիրառվող լեզվական-խոսքային չափանիշների առանձնահատկությունները: Այդ ոլորտներին վերաբերող փաստաթղթերի կազմման և դրանց համակարգման հիմնական սկզբունքները: Գովազդային տեքստերի ձևավորման և դրանց մատուցման հիմնական եղանակները:

Հրապարակախոսական ոճի ընդհանուր բնութագիրը: Հուզական-հոգեբանական ներգործության և փաստարկվածության ու տրամաբանականության մոտեցումների համադրումը որպես այդ ոճի գործառության հիմնական սկզբունք:

Գեղարվեստական ոճի ընդհանուր բնութագիրը: Այդ ոճի հիմնական չափանիշների /գրական լեզվի մաքրությունն ու կատարելությունը, գեղագիտականությունը ևն./ պարզաբանումը հայ և համաշխարհային գրական մեծագույն արժեքների օրինակով:

Ճարտասանական արվեստի պատմության և հիմնական սկզբունքների համառոտ ակնարկ:

Ճարտասանական արվեստի կազմախոսական-բնախոսական հիմքերը. ձայնի դրվածքը, շնչառության տեխնիկան, հնչյունի ձևավորման և արտաբերման տեխնիկան ու կուլտուրան: Խոսքի կազմակերպման հոգեբանական, հուզական և տրամաբանական մեխանիզմները

4. **Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ-4 կրեդիտ-120 ժամ**

Գյուղատնտեսության համար մասնագետներ պատրաստելու խնդիրները որոշարկում են «Ռուսաց լեզու» դասընթացի հաղորդակցական և պրակտիկ բնույթը. անհատական խոսքի և երկխոսության, ընթերցելու և գրելու, ընկալման և խոսակցական ունակությունների ձևավորումը և զարգացումը:

Գործառական-ինաստաբանական հիմքի վրա խմբավորված քերականական գիտելիքների ուսուցումը դիդակտիկ սկզբունքների և ուսումնական նյութի բաշխվածության հաշվառմամբ:

Նվազագույնի հասցված բառային-քերականական նյութի մատուցումը որպես խոսքի կուլտուրայի կատարելագործման, խոսակցական սխալների կանխատեսման և դրանց վերացման լեզվական հիմք:

Ուսուցանվող լեզվի երկրի մշակույթը և ավանդույթները:

Խոսքի բարեկանոնության /կանոնավարության/ տարբեր միջոցների կիրառումը որոշակի իրավիճակներում:

Խոսելու ունակությունը. անհատական խոսքի և երկխոսության կազմակերպումը օգտագործվող պարզ բառային-քերականական միջոցների կիրառմամբ:

Հրապարակային խոսքի հիմունքները /բանավոր հաղորդում, զեկույց ևն./:

Խոսքի ընկալումը. անհատական խոսքի և երկխոսության ըմբռնումը կենցաղային և մասնագիտական հաղորդակցման ոլորտներում:

Ընթերցանություն. տեքստերի տեսակները, ոչ բարդ տեքստեր և մասնագիտական ուղղվածության տեքստեր:

Գրավոր խոսքի ունակություն. համառոտագրում, ռեֆերատ, հաղորդում, դրույթներ:

Վարչագործարարական ոճ /դիմում, ստացական, արձանագրություն, տեղեկանք և այլն/:

5. **Օտար լեզու-8 կրեդիտ-240 ժամ**

Հնչյունների արտասանության, ինտոնացիայի, շեշտադրական համակարգի և ուսուցանվող լեզվում խոսքի ռիթմի յուրահատկությունը, տառադարձության ընթերցանությունը:

Ընդհանուր և տերմինաբանական բնույթի 2000 ուսուցողական բառային միավորով բառապաշարի նվազագույն:

Ըստ կիրառման բնագավառի /կենցաղային, տերմինաբանական, ընդհանուր գիտական, պաշտոնական և այլն/ հասկացություն բառապաշարների տարբերակման մասին:

Հասկացություն բառակազմական հիմնական միջոցների մասին:

Հասկացություն ազատ և կայուն բառակապակցությունների, դարձվածաբանական միավորների մասին:

Գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ առանց իմաստի աղճատման

ընդհանուր բնույթի հաղորդակցումն ապահովող քերականական երևույթներ:

Ուսումնասիրվող լեզվի երկրների մշակույթն ու սովորույթները:

Բանավոր խոսքը: Պաշտոնական և ոչ պաշտոնական շփման ընդհանուր հաղորդակցական իրադրություններում առավել չափով օգտագործվող և հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգտագործումը երկխոսության մեջ և անհատական խոսքում: Հրապարակային խոսքի հիմունքները /բանավոր հաղորդում, զեկույց/:

Ունկնդրում: Կենցաղային և մասնագիտական հաղորդակցման բնագավառներում երկխոսության և անհատական խոսքի ըմբռնումը:

Ընթերցանություն: Տեքստերի տեսակները. ոչ բարդ գործնական բնույթի և լայն մասնագիտական ուղղվածության տեքստեր:

Գրավոր խոսքը: Խոսքային ստեղծագործությունների տեսակները. կենսագրություն, փոքր զեկույցներ, անձնական նամակ, գործնական նամակ, ռեֆերատ

6. **Մշակութաբանություն-2 կրեդիտ-60 ժամ**

«Մշակագիտություն» առարկայի դասընթացը նպատակ է հետապնդում ուսանողության մշակութաբանական զգացողության դաստիարակության գործում, ձևավորում նրանց մեջ մի նոր գիտակցություն, առանց որի անհատ է մարդկային կյանքը, մարդու գործունեությունը մշակույթից դուրս:

Մշակագիտություն և մշակույթի պատմություն: Մշակութաբանական տեսություններ: Մշակույթի կառուցվածք և գործառույթներ: Հոգևոր մշակույթը և նրա տարրերը: Մշակույթային ժառանգորդում, նորարություն, ավանդապահություն: Չանգվածային և էլիտար մշակույթ: Արևելք-Արևմուտք մշակույթային առընչություններ: Մշակույթ և քաղաքակրթություն:

Նախնադարի մշակույթ և դիցաբանական աշխարհայացք: Արվեստի տեսակների առաջացումը:

Հին Աշխարհի մշակույթը. Միջագետք, Հնդկաստան, Չինաստան, Եգիպտոս, Հայաստան: Կրոնա-դիցաբանական, կրոնա-փիլիսոփայական համակարգեր և արվեստ:

Անտիկ Աշխարհի մշակույթը. Հունաստան, Հռոմ: Կրոնա-դիցաբանական հավատալիքներ և արվեստ:

Միջնադարյան մշակույթ և գեղարվեստական ուճեր: Վերածննդի մշակույթ: Հումանիզմ և արվեստ: Մշակույթը 17-20-րդ դարերում: Դարաշրջաններ և գեղարվեստական ուղղություններ

7. **Քաղաքագիտություն-3 կրեդիտ-90 ժամ**

Քաղաքագիտության օբյեկտը և առարկան, մեթոդները և գործառությունները: Քաղաքագիտության և այլ հասարակագիտական առարկաների փոխհարաբերությունները: Քաղաքական ուսմունքների զարացման հիմնական փուլերը /Անտիկ Աշխարհ, միջնադար, Նոր և Նորագույն շրջան/: Հայ քաղաքական մտքի ավանդույթներն, արմատները սոցիոմշակույթային հիմքերը: Արդի քաղաքագիտական դպրոցները:

Քաղաքականություն և քաղաքական իշխանություն: Քաղաքական իշխանության իրականացման մեխանիզմները, արդյունավետությունը և լեգիտիմությունը: Քաղաքական համակարգ: Քաղաքական ռեժիմ /վարչակարգ/: Դեմոկրատիայի ժամանակակից տեսություններն ու մոդելները: Պետություն,գործառությունները, ձևերը: Պետական իշխանության մարմինները Հայաստանում: Իրական և սոցիալական պետություն: Խորհրդարան և խորհրդարանականություն: Կառավարման նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական ձևերի համեմատական վերլուծությունը:

Քաղաքանական իշխանության սոցիալական սուբյեկտները: Շահերի խմբեր, քաղաքական լիդերություն և քաղաքական լիդերներ, էլիտա: Ընտրություններ և ընտրական համակարգեր: ՀՀ ընտրական համակարգը: Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Բազմակուսակցական համակարգի կայացումը Հայաստանում:

Քաղաքական գործընթացներ: Քաղաքական արդիականացում: Քաղաքական արդիականացման առանձնահատկությունները ՀՀ: Քաղաքական կոնֆլիկտներ և

դրանց լուծման ուղիները: Քաղաքական տեխնոլոգիաներ:

Համաշխարհային քաղաքական գործընթացներ և միջազգային հարաբերություններ: Արդի համաշխարհային հարաբերությունների աշխարհաքաղաքական վերլուծություն: Հայաստանի ազգային շահերը նոր աշխարհաքաղաքական իրավիճակում:

Քաղաքական գլոբալիստիկա. ընդհանուր բնութագիրը, համամարդկային հիմնահարցերի լուծման քաղաքական ուղիները: Քաղաքական կանխատեսում:

8. Իրավագիտություն-4 կրեդիտ-120 ժամ

Պետությունն ու իրավունքը: Գրանց դերը հասարակության կյանքում: Պետության և իրավունքի ծագումը, էությունը, հատկանիշները, գործառույթները, կառուցվածքը, ձևերը:

Իրավունքի նորմերը և աղբյուրները: Նորմատիվային իրավական ակտերի հասկացությունը, տեսակները: Օրինականության հասկացությունը:

Հայաստանի Հանրապետության իրավունքի համակարգը: Իրավունքի ճյուղերը:

Սահմանադրական իրավունք: Պետության և անհատի փոխհարաբերության հիմքերը: Քաղաքացիների իրավական վիճակի սկզբունքները: Պետական մարմինների համակարգը և տեսակները:

Քաղաքացիական իրավունք: Քաղաքացիական իրավահարաբերություն: Իրավաբանական անձիք, դրանց տեսակները և կազմավորման առանձնահատկությունները: Անձնական ոչ գույքային բարիքները: Սեփականության իրավունք: Գրավի իրավունք: Գործարքներ և ներկայացուցչություն: Հայցային վաղեմություն: Պարտավորություններ: Պայմանագիր:

Հեղինակային իրավունք: Անշարժ և շարժական գույքի նկատմամբ իրավունքների պահպանություն: Ժառանգական իրավունք:

Աշխատանքային իրավունք: Աշխատանքային պայմանագրեր: աշխատանքային վեճեր;

Վարչական իրավունք: Պետական կառավարման մարմինների համակարգը և տեսակները:

Քրեական իրավունք: Հանցաքործության հասկացությունը և դրա տեսակները:

Քրեական պատասխանատվության հիմքը: Քրեական պատիժը և պատժի տեսակները: Հողային իրավունք: ՀՀ Հողային օրենսդրությունը: Հողային վեճերի լուծումը:

Իրավակարգի պահպանության և հանցավորության դեմ պայքարող մարմինների խնդիրներն ու համակարգը: ՀՀ դատական համակարգը: Դատախազության մարմինների համակարգը: ՀՀ ոստիկանության մարմինները: Արդարադատությունը և դրա խնդիրները:

Քաղաքացիական դատավարության իրավունքը: Քրեական դատավարության իրավունքը: Ապացույցներ, իրեդեն ապացույցներ: Դատավարական հարկադրանքի միջոցները: Ձեռքակալում: Խափանման միջոցներ: Բերման ենթարկելը:

Միջազգային իրավունք: Միջազգային իրավունքի սկզբունքները և սուբյեկտները: Միջազգային պայմանագրեր: Միջազգային իրավունքի աղբյուրները

9. Փիլիսոփայություն-4 կրեդիտ-120 ժամ

Փիլիսոփայության առարկան: Փիլիսոփայության ձևավորումը, հետազոտության ոլորտները, աշխարհայացքային հիմնախնդիրները: Փիլիսոփայական գիտելիքների կառուցվածքը: Փիլիսոփայության տեղը և դերը գիտության ու մշակույթի ոլորտում:

Փիլիսոփայության զարգացման հիմնական փուլերը: Անտիկ Հունաստանի, միջին դարերի, հայոց քրիստոնեական ջատագովական, նոր և նորագույն ժամանակաշրջանի փիլիսոփայական միտքը:

Ուսմունք կեցության մասին: Տարածությունը, ժամանակը, շարժումը կեցության դրսևորման եղանակ: Շարժման, ժամանակի, տարածության վերաբերյալ դասական և հարաբերականության տեսությունները: Շարժում և զարգացում: Դետերմինիզմ և ինդետերմինիզմ: Օրենք և օրինաչափություն:

Գիտակցություն: Նյութականը և իդեալականը: Գիտակցականը և անգիտակցականը: Լեզու և մտածողություն:

Ճանաչողություն: Առօրեական, գիտական, կրոնական, փիլիսոփայական ճանաչողություն: Գիտելիք և հավատ: Ըմբռնում և բացատրություն: Իմացության զգայա-

կան և ռացիոնալ աստիճանները: Ստեղծագործության, բանավեճի, փաստարկման, ինտուիցիայի դերը կենսաբանական հետազոտություններում:

Ճշմարտության հիմնախնդիրը: Ճշմարտության կոնկրետությունը, բաժարձակությունը, օբյեկտիվությունը, հարաբերականությունը: Ճշմարտության չափանիշները:

Գիտական ճանաչողության կառուցվածքը: Գիտական իմացության էմպիրիկ և տեսական մակարդակները: Գիտական հետազոտության մեթոդները: Գիտության դերի արժեքավորումները փիլիսոփայության մեջ: Գիտատեխնիկական հեղափոխություն :

Մարդու կեցության իմաստ: Մարդը սոցիալական միջավայրի արդյունք, կենսաբանական, հոգեկան նախահիմքերի ամբողջություն: Ազատություն և պատասխանատվություն: Բարոյականություն, արդարություն, իրավունք: Բարոյական արժեք: Գեղագիտական և կրոնական արժեքներ: Խղճի ազատություն:

Բնություն և հասարակություն: Հասարակության դասային շերտավորման հիմքերը: Քաղաքացիական հասարակություն և պետություն: Ազատություն և անհրաժեշտություն: Հասարակական զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Սոցիալական հեղափոխություն:

Փիլիսոփայության հիմնական ուղղությունները և դպրոցները: 20-րդ դարի փիլիսոփայական հիմնական հոսանքները:

Կենսաբանության և էկոլոգիայի փիլիսոփայական հիմնախնդիրները: Բնապահպանական շարժումներ:

10. **Տնտեսագիտության տեսություն-4 կրեդիտ-120 ժամ**

Տնտեսագիտության տեսության հիմունքները: Տնտեսագիտության տեսության առարկան և գործառույթները: Բարիք: Պահանջմունքներ, ռեսուրսներ: Տնտեսական ընտրություն: Տնտեսական հարաբերություններ: Տնտեսական հա մակարգեր: Տնտեսագիտության տեսության զարգացման հիմնական փուլերը: Տնտեսագիտության տեսության մեթոդները:

Միկրոտնտեսագիտություն: Շուկա, առաջարկ և պահանջարկ: Սպառողական նախընտրություն և սահմանային օգտակարություն: Պահանջարկի գործոնները: Անհատական և շուկայական պահանջարկ: Եկամտի էֆեկտ և փոխարինման էֆեկտ: Առաձգականություն: Առաջարկը և նրա գործոնները: Սահմանային արտադրողականության անկման օրենքը: Մասշտաբի էֆեկտը: Ծախսերի տեսակները:

Ձեռնարկություն: Հասույթը և շահույթը: Ձեռնարկատիրություն: Շահույթի մաքսիմալացման սկզբունքը, կատարյալ մրցանակային ֆիրմայի և ճյուղի առաջարկը: Մրցակցային շուկաների արդյունավետությունը: Մենաշնորհ: Մենաշնորհատիրական մրցակցություն: Օլիգոպոլիս: Հակամենաշնորհային կարգավորում: Արտադրության գործոնների նկատմամբ պահանջարկը:

Աշխատանքի շուկա: Աշխատանքի առաջարկը և պահանջարկը: Աշխատավարձ և զբաղվածություն: Կապիտալի շուկա: Տոկոսադրույք և ինվեստիցիա: Հողի շուկա: Ռենտա: Ընդհանուր հավասարակշռություն և բարեկեցություն: Եկամտների բաշխում: Անհավասարություն: Արտաքին էֆեկտներ և հասարակական բարիքներ: Պետության դերը:

Մակրոտնտեսագիտություն: Ազգային տնտեսությունը որպես ամբողջություն: ՀՆԱ-ն և նրա չափման եղանակները: Ազգային եկամուտ: Տնօրինվող անձնական եկամուտ: Գների ինդեքսները: Գործազրկությունը և նրա ձևերը: Ինֆլյացիան և նրա տեսակները: Տնտեսական պարբերաշրջանները: Մակրոտնտեսական հավասարակշռություն : Ամբողջական առաջարկ և ամբողջական պահանջարկ: Կայունացման քաղականություն: Հավասարակշռությունը ապրանքային շուկայում:

Սպառում և խնայողություն: Ինվեստիցիա: Պետական ցախսեր և հարկեր: Մուլտիպլիկատորի էֆեկտը: Հարկաբյուջետային քաղաքականություն:

Փողը և նրա ֆունկցիաները: Հավասարակշռությունը փողի շուկայիում: Փողային մուլտիպլիկատորը: Բանկային համակարգ: Դրամավարկային քաղաքականություն: Տնտեսական աճ և զարգացում: Միջազգային տնտեսական հարաբերություններ: Արտաքին առևտուր և արտաքին քաղաքականություն: Վճարային հաշվեկշիռ: Տարադրամի կուրսը:

Անցման շրջանի առանձնահատկությունները Հայաստանում: Սոցիալական ոլորտի վերափոխումները: Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը: Բաց էկո-

նումիկայի ձևավորումը:

Բուհական քաղաղրիչ

1. **Արտակարգ իրավիճակների տնտեսագիտություն-4 կրեդիտ-120 ժամ**

Կենսագործունեության անվտանգության և արտակարգ իրավիճակների տնտեսագիտություն-ը որպես գիտություն, նրա խնդիրները և դերը ժողովրդական տնտեսության մեջ: Ուսումնասիրության մեթոդները: Կապը տնտեսագիտական, տեխնոլոգիական, բնական և բնապահպանական գիտությունների հետ:

Ուսումնասիրման օբյեկտները:

Բնական ռեսուրսների գնահատման և օգտագործման արդյունավետության որոշման մեթոդիկան:

Տնտեսական ռեսուրսներ: Հիմնական և շրջանառու կապիտալ: Նրանց վիճակի գնահատումը: Օգտագործման տնտեսական արդյունավետության որոշման մեթոդիկան, ցուցանիշները:

Իմացաբանական հասկացություններ՝ ՀՆԱ, համախառն արտադրանքի, դրամական հոսքեր, վերջնական արդյունք, համախառն եկամուտ, ինքնարժեք, շահույթ:

Ինվեստիցիաներ, նրանց պահանջի և տնտեսական արդյունավետության որոշման մեթոդիկան, ցուցանիշները:

Երկրի, մարզի, համայնքի, առանձին տնտեսության տնտեսական անվտանգության բնութագրող ցուցանիշների համակարգը և նրանց որոշումը: Պարենային անվտանգությունը արտակարգ իրավիճակներում:

Շրջակա միջավայրի պահպանության համար միջոցների պահանջի և տնտեսական արդյունավետության որոշումը: Ցուցանիշների գնահատման մեթոդիկան:

Շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով տնտեսավարող սուբյեկտների (գյուղատնտեսության, արդյունաբերության, կապի, շինարարության), և մարդկանց ու կենդանիների առողջությանը հասցված վնասի որոշման մեթոդիկան: Դրանց վերացման համար անհրաժեշտ կապիտալ ներդրումների, ընթացիկ արտադրական ծախսերի արդյունավետության որոշման մեթոդիկան:

Ինվեստիցիաների ներդրման արդյունավետության և ռիսկի գնահատումը արտակարգ իրավիճակներում: Բնակչության տարաբնակեցման համար միջոցների պահանջը և արդյունավետությունը:

Մտավոր կապիտալի պատրաստման համար ներդրումների առանձնահատկությունները և արդյունավետությունը արտակարգ իրավիճակներում:

Արտադրության տեխնիկա-տեխնոլոգիական անվտանգության համար ներդրումների տնտեսական արդյունավետության գնահատման մեթոդիկան: Ձեռնարկության սանիտարա-հիգիենիկ պայմանների համար ներդրումների արդյունավետությունը:

Մարքեթինգի էությունը, ծագումը զարգացումը և մուտքը ՀՀ: Մարքեթինգի ֆունկցիաները, սկզբունքները, հիմնադրույթները, ծրագիրը, տակտիկան, ստրատեգիան, տեսակները:

Մարքեթինգը արտակարգ իրավիճակներում: Մարքեթինգի շրջակա միջավայրը: Մարքեթինգի հետազոտության համակարգը: Շուկայի հատվածավորումը: Ապրանքներ և ապրանքային քաղաքականությունը արտակարգ իրավիճակներում: Գնագոյացումը արտակարգ իրավիճակներում: Ապրանքշարժը և առաջարժը արտակարգ իրավիճակներում:

2. **Կառավարման հիմունքներ-3 կրեդիտ-90 ժամ**

Արտակարգ իրավիճակների կառավարման օրենսդրական և այլ իրավաբանական փաստա-թղթերը: Կառավարման գործընթացի տեսական հիմունքները:

Կենսագործունեության անվտանգության ստանդարտների համակարգը:

Կենսագործունեության անվտանգության ապահովման համակարգը տնտեսության օբյեկտներում խաղաղ և արտակարգ իրավիճակներում: Աշխատանքի պաշտպանության կառավարման համակարգը ՀՀ-ում: Աշխատանքի անվտանգության և արտադրական սանիտարիայի սկզբունքները և մեթոդները: Կառավարման սկզբունքները արտակարգ իրավիճակներում:

Աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը բնական և տեխնաձին աղետների ժամանակ: Տնտեսության օբյեկտների կայունության ապահովումը արտա-

կարգ իրավիճակներում:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

Սոցիոլոգիա

*ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ և ԲՆԱԳԻՏԱԿԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ*

Հանրապետական բաղադրիչ

1. Բարձրագույն մաթեմատիկա-10 կրեդիտ-300 ժամ

Անալիտիկ երկրաչափություն: Ուղիղ գիծը հարթության վրա: Երկրորդ կարգի կորեր: Կոորդինատների ձևափոխությունը: Հարթությունը և ուղիղ գիծը տարածության մեջ: Երկրորդ կարգի մակերևույթներ: Գծային հանրահաշիվ: Որոշիչներ: Հակադարձ մատրից: Գծային հավասարումների համասեռ և ոչ համասեռ համակարգեր: Կրամերի կանոնը: Գաուսի մեթոդը: Վեկտորական հանրահաշիվ: Մաթեմատիկական անալիզ: Թվային հաջորդականություններ: Չուզամետ հաջորդականություններ և նրանց հատկությունները: Մեկ փոփոխականի ֆունկցիա: Ֆունկցիայի անընդհատությունը: Անընդհատ ֆունկցիայի հատկությունները: Ֆունկցիայի ածանցյալը: Ֆունկցիայի հետազոտումը դիֆերենցիալ հաշվի մեթոդներով և գրաֆիկի կառուցումը: Մի քանի փոփոխականի ֆունկցիաներ: Նվազագույն քառակուսիների մեթոդը: Կոմպլեքս թվեր: Անորոշ և որոշյալ ինտեգրալներ: Որոշյալ ինտեգրալի կիրառությունները: Անիսկական ինտեգրալներ: Բազմապատիկ և կորագիծ ինտեգրալներ: Նրանց կիրառությունները: Մակերևույթային ինտեգրալներ: Գաշտի տեսության Էլեմենտները: Թվային շարքեր: Գրական անդամներով շարքերի զուգամիտության հայտանիշները: Կամայական անդամներով շարքերի զուգամիտությունը: Ֆունկցիոնալ շարքեր: Աստիճանային շարք: Թեյլորի և Մակլորենի շարքեր: Ֆուրյեի շարք: Սովորական դիֆերենցիալ հավասարումներ: Առաջին կարգի համասեռ գծային և դրանց բերվող հավասարումներ: Երկրորդ կարգի գծային ամասեռ և ոչ համասեռ հավասարումներ: Հավանականությունների տեսություն:

2. Ֆիզիկա-8 կրեդիտ-240 ժամ

Մեխանիկայի ֆիզիկական հիմունքները: Վիճակի հասկացողությունը դասական մեխանիկայում շարժման հավասարումները, պահպանման օրենքներ, ռելյատիվիստական մեխանիկայի հիմունքները, հարաբերության սկզբունքը մեխանիկայում, պինդ մարմնի, հեղուկի և գազերի կինեմատիկա և դինամիկա:

Էլեկտրականություն և մագնիսականություն:

Էլեկտրաստատիկական և մագնետոստատիկական վակուումում և նյութերում, Մաքսվելի հավասարումը ինտեգրալ և դիֆերենցիալ ձևով, նյութական հավասարումներ, հարաբերականության սկզբունքը Էլեկտրոդինամիկայում:

Տատանումների և ալիքների ֆիզիկա

Նորմալ ալիքներ, ալիքների ինտերֆերենցիա և դիֆրակցիա, Ֆուրյե-օպտիկայի տարրերը:

Քվանտային ֆիզիկա

Ալիքակորպուսկուլյար դիալիզմ, անորոշության սկզբունքը, քվանտային վիճակները, շարժման քվանտային հավասարումը, ատոմների և մոլեկուլների էներգետիկ լուսապատկերը:

Ստատիկական ֆիզիկա և թերմոդինամիկա:

Թերմոդինամիկայի 3 սկզբունքները, վիճակի թերմոդինամիկական ֆունկցիաները, դասական և քվանտային ստատիստիկա, կինետիկ երևույթներ, լիցքավորված մասնիկների համակարգեր:

Միջուկային ֆիզիկա

Միջուկի հիմնական բնութագրերը, միջուկի պրոտոնո-նեյտրոնային կառուցվածքը, β- և γ- ճառագայթումները, ռադիոակտիվության ընդհանուր բնութագիրը, միջուկային ռեակցիաներ, արհեստական ռադիոակտիվություն, միջուկների տրոհում, միջուկային շղթայական ռեակցիա, հասկացություն միջուկային էներգետիկայի մասին, թերմոդինամիկական ռեակցիաներ:

3. **Քիմիա-3 կրեդիտ-90 ժամ**

Նյութի կառույցը: Ատոմի, մոլեկուլի կառուցվածքը, քիմիական կապ: Քիմիական համակարգեր՝ լուծույթներ, դիսպերս համակարգեր, էլեկտրաքիմիական համակարգեր:

Քիմիական թերմոդինամիկա և կինետիկա՝ քիմիական պրոցեսների էներգետիկական, քիմիական և ֆազային հավասարակշռություններ: Քիմիական ռեակցիայի առագությունը, կատալիտիկ ռեակցիաներ:

Պարբերական համակարգը և բիոգեն էլեմենտների քիմիան, նրանց հատկությունը, ստացումը, կիրառումը:

Անալիտիկ քիմիայի հիմունքները:

Որակական և քանակական անալիզ: Անալիզի ֆիզիկա-քիմիական մեթոդները:

Օրգանական միացությունների քիմիան՝ ածխաջրածիններ, ֆունկցիոնալ խմբերով միացություններ, ճարպեր, ածխաջրեր, սպիտակուցներ, պոլիմերներ:

Քիմիական պրակտիկում:

4. **Տեսական մեխանիկա-5 կրեդիտ-150 ժամ**

Տեսական մեխանիկան և նրա դերը բնական և տեխնիկական գիտությունների շարքում: Ստատիկա: Ստատիկայի աքսիոմները: Կապեր, դրանց հակազդումները: Կապերի աքսիոմը: Չուզամետ ուժահամակարգի հավասարաքշռության երկրաչափական և անալիտիկ պայմանները: Ուժի մոմենտ կենտրոնի և առանցքի նկատմամբ: Ուժագույգերի տեսություն: Կամայական տարածական ուժահամակարգ: Կամայական տարածական ուժահամակարգի տրված կենտրոն բերման դեպքերը: Կամայական տարածական ուժահամակարգի հավասարակշռությունը: Կամայական հարթ ուժահամակարգի հավասարակշռությունը: Սահքի շփում: Շփման անկյուն և ծփման կոն: Գլորման շփում:

Չուզահետ ուժերի կենտրոն: Ծանրության կենտրոն: Կետի կինեմատիկա: Շրջման տրման եղանակները: Հետագիծ: Արագության վեկտոր: Արագացման վեկտոր: Շոշափող և նորմալ արագացումներ: Պինդ մարմնի համընթաց շարժում: Պինդ մարմնի պտտական շարժում: Անկյունային արագություն, անկյունային արագացում: Մարմնի կամայական կետի արագությունը և արագացումը պտտական շարժման դեպքում: Պինդ մարմնի հարթ (զուգահեռական) շարժում: Շարժման վերլուծումը բևեռի հետ միասին համընթացի և բևեռի շուրջը պտտականի: Կամայական կետի շարժման օրենքը, հետագիծը և արագությունը:

Կետի բարդ (բաժարձակ) շարժում: Կորիոլիսի թեորեմը: Նյութական կետի դինամիկայի հիմնական օրենքները: Նյութական կետի դինամիկայի երկու հիմնական խնդիրները: Նյութական կետի շարժման դիֆերենցիալ հավասարումները: Նյութական կետի հարաբերական շարժման և հարաբերական դադարի հավասարումները: Ոչ ազատ նյութական կետի շարժման դիֆերենցիալ հավասարումները: Նյութական կետի ուղղագիծ տատանումներ: Ուժի իմպուլս: Նյութական կետի շարժման քանակ: Թեորեմ նյութական կետի շարժման քանակի փոփոխման վերաբերյալ: Նյութական կետի շարժման քանակի մոմենտ: Ուժի աշխատանք և հզորություն: Նյութական կետի կինետիկ էներգիա և թեորեմ դրա փոփոխման վերաբերյալ: Մեխանիկական համակարգ: Արտաքին և ներքին ուժեր: Ներքին ուժերի հատկությունները: Մեխանիկական համակարգի զանգված: Չանգվածների կենտրոն: Մեխանիկական համակարգի իներցիայի մոմենտ: Մեխանիկական համակարգի իներցիայի մոմենտ: Մեխանիկական համակարգի շարժման դիֆերենցիալ հավասարումների համակարգը: Մեխանիկական համակարգի զանգվածների կենտրոնի պահպանման օրենքը: Մեխանիկական համակարգի շարժման քանակ: Թեորեմ մեխանիկական համակարգի շարժման քանակի փոփոխման վերաբերյալ: Մեխանիկական համակարգի շարժման քանակների գլխավոր մոմենտ: Մեխանիկական համակարգի շարժման քանակների գլխավոր մոմենտի վերաբերյալ թեորեմը և դրա հետևանքները: Մեխանիկական համակարգի կինետիկ էներգիա: Թեորեմ մեխանիկական համակարգի կինետիկ էներգիայի փոփոխման վերաբերյալ: Դալամբերի սկզբունքը: Նյութական կետի իներցիայի ուժ: Դալամբերի սկզբունքը նյութական կետի և մեխանիկական համակարգի համար: Լանգրանժի հավասարումներ: Մեխանիկական համակարգի ընդհանրացված կոորդինատներ, ընդհանրացված առագություններ և ընդհանրացված ուժեր: Լանգրանժի առաջին և երկրորդ սեռի հա-

վասարումները:

5. **Ինֆորմատիկա և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ -4 կրեդիտ-120 ժամ**

Դասընթացի առարկան, խնդիրները, ինֆորմատիկայի դերը, համակարգիչների տեսական հիմունքները:

Համակարգիչների ստեղծման ու զարգացման փուլերը: Ֆունկցիոնալ սարքերի տրամաբանական ֆունկցիաները, սարքի տրամաբանական սխեման: Տրամաբանական դիզայնիցիա, կոնյուկցիա և բացասում գործողությունները:

Համակարգիչների տեխնիկական ապահովումը, ներքին և արտաքին սարքեր, պրոցեսոր:

-Ինֆորմատիկայի մուտքագրման սարքեր (ստեղնաշար, ուղղորդիչ՝ մկնիկ, ցուցարկու՝ դիսփլեյ, տեսագիր՝ սկաներ և այլն);

-Ինֆորմատիկայի ելքավորման սարքեր (ցուցարկու, տպիչ և այլն);

-Արտաքին հիշասարք (ինֆորմատիկայի երկարատև պահպանման սարքեր);

-Ինֆորմացիայի հաղորդման սարքեր (մոդեմ, ֆաքս և այլտիպի տերմինալներ):

Համակարգիչների ծրագրային ապահովումը:

Համակարգային ծրագրեր՝ օպերացիոն համակարգեր, ծրագրեր-թաղանթներ, դրայվերներ և ուտիլիտներ: Գործիքային ծրագրային ապահովումը որպես ծրագրավորման համակարգ, ծրագրավորման լեզվի համակարգը, ծրագրավորման միջավայրի համակարգը, ստանդարտ ֆունկցիաների գլխարանը և այլն: Իսկ կիրառարական ծրագրային ապահովումը պարունակում է սատանդարտ ծրագրերի գրադարանը, օգտագործողի կիրառական ծրագրերը և կիրառական ծրագրերի փաթեթները:

Ալգորիթմացում: Ալգորիթմացումը, խնդիրների լուծման ալգորիթմների կառուցման մեթոդները: Ալգորիթմի հատկությունները:

Հաշվողական գործընթացների տեսակները, ալգորիթմի նկարագրման եղանակները, ալգորիթմի որակի որոշման եղանակները, ալգորիթմի մշակման փուլերը և կարգը:

Ծրագրավորում: Ծրագրավորումը որպես ինֆորմատիկայի ճյուղ, ծրագրեր կազմելու մեթոդներն ու ձևերը: Ծրագրավորման լեզուների դասակարգումը, ծրագրավորման լեզվի տարրերը, ծրագրավորման լեզվի կառուցվածքները, ծրագրերի մշակումը, ծրագրի կատարման փուլերը:

Համակարգչային համակարգեր և ցանցեր: Համակարգչային ցանցեր, նրանց տիպերը: Տեղային, բաշխված, մոլորակային և նարնց տեխնիկական ու ծարագրային ապահովումը:

6. **Գծագրական երկրաչափություն և ճարտարագիտական գրաֆիկա-8 կրեդիտ-240 ժամ**

1. **Գծագրական երկրաչափություն**

Ներածություն: Պրոյեկտման մեթոդները: Ուղղանկյուն պրոյեկտում: Մոնժի էպյուր: Կետի, ուղղի, հարթության և բազմանիստերի պրոյեկտումը: Դիրքային խնդիրներ: Մետրական խնդիրներ: Գծագրական երկրաչափության մեջ կիրառվող մեթոդները: Բազմանիստեր: Կոր գծեր: Մակերևույթներ, պտտման մակերևույթներ: Դիրքային և մետրական խնդիրներ: Պտուտական մակերևույթներ: Մակերևույթների փռումը: Աքսոնոմետրիկ պրոյեկցիաներ:

2. **Ճարտարագիտական գրաֆիկա**

Կոնստրուկտորական փաստաթղթեր: Գծագրերի ձևակերպումը: Երկրաչափական գծագրություն: Տեսքեր, գրառումներ, նշանակումներ: Աքսոնոմետրիկ պրոյեկցիաներ: Մեքենամասերի տարրերի պատկերումը և նշանակումները: Միացումների պատկերումը: Քանդովի միացումներ: Ոչ քանդովի միացումներ: Մեքենամասերի էսքիզավորում: Մեքենամասերի աշխատանքային գծագրերի կազմում: Հավաքական միավորների պատկերումը: Հավաքական գծագրերի մասնատում: Շինարարական գծագրության տարրեր:

7. **Ֆիզիոլոգիայի հիմունքներ-3 կրեդիտ-90 ժամ**

Մարդու օրգանիզմը և նրա հիմնական ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Նյութափոխանակություն, աճ և զարգացում, օրգանիզմը որպես մեկ ամբողջություն: Գործողությունների և ձևերի միասնություն: Առաջնային և երկրորդային

ներվային գործունեություն, դրանց միասնությունը: Ջգացողության օրգաններ, շարժողական ապարատի ֆիզիոլոգիա: Գործունեության ֆիզիոլոգիա:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

Ճառագայթային քիմիա
Բիոքիմիայի հիմունքներ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ

Հանրապետական բաղադրիչ

1. Մեքենամասեր և մեքենաների և մեխանիզմների տեսություն-6 կրեդիտ-180 ժամ

Հիմնական հասկացություններ: Աշխատունակության չափանիշները և նախագծման հիմունքները:

Մեքենաների մասերի միացումներ: Չքանդվող միացումներ: Եռակցված, գամային, երաշխավորված ձգվածքով և այլ միացումներ: Հաշվարկ ըստ ամրության: Քանդվող միացումներ: Պարուրակային, երիթային, շլիցավոր և սեղմակային միացումներ: Հիմնական տեղեկություններ և հաշվարկը ըստ ամրության:

Մեխանիկական փոխանցումներ: Հիմնական տեղեկություններ, դասակարգումը, ընդհանուր պարամետրեր: Շփական, ատամնավոր, որդնակային, փոկային և շղթայավոր փոխանցումներ: Փոխանցումների հաշվարկը ըստ ամրության:

Շարժմանը սպասարկող մեքենամասեր և հավաքական միավորներ: Լիսեռներ և սռնիներ: Ընդհանուր տեղեկություններ: Հաշվարկը ըստ ամրության, կոշտության և տատանման: Առանցքակալներ: Սահքի առանցքակալներ: Ընդհանուր տեղեկություններ: Հաշվարկը ըստ ամրության: Ստուգումը ըստ տաքացման: Գլորման առանցքակալներ: Ընդհանուր տեղեկություններ: Հաշվարկը և ընտրությունը ըստ ստատիկ և դինամիկ բեռնունակության: Մեխանիկական կցորդիչներ: Ընդհանուր տեղեկություններ: Հաշվարկը և նախագծումը: Ճկուն տարրեր: Չսպանակների հաշվարկը:

ՄՄՏ հիմնական հասկացությունները: Մեխանիզմների կառուցվածքային վերլուծությունը, դրա մեթոդները և սինթեզ: Մեխանիզմների շարժունակությունը և կապերը: Հարթ մեխանիզմների դասակարգումն ըստ Ասուրի և Արտոպոլսկու: Մեխանիզմների կինեմատիկական ուսումնասիրությունը, դրա մեթոդները: Մեխանիզմի դիրքերը, օղակների առանձին կետերի հետագծերը: Մեխանիզմների արագությունների և արագացումների պլանները և դրանց հատկությունները: Օղակների անկյունային արագությունները և անկյունային արագացումները, դրանց որոշումը: Կինեմատիկական դիագրամներ: Գրաֆիկական դիֆերենցում և գրաֆիկական ինտեգրում: Մեխանիզմների կինեմատիկայի անալիտիկական ուսումնասիրությունը և դրանց մեթոդները: Մեխանիզմների ուժային վերլուծությունը: Մեխանիզմների ուժային հաշվարկ-մեթոդը: Օղակների իներցիոն ուժերը հարթ մեխանիզմների մեջ: Հակազդումները կինեմատիկական զույգերում: Առաջնային օղակի կինետոստատիկան: Ուժային պլանը հարթ մեխանիզմների համար: Բերված ուժեր և բերված մոմենտներ: Մեխանիզմների դինամիկական վերլուծությունը: Մեխանիզմի օղակների վրա ազդող ուժերի բնութագրերը: Մեխանիզմի կինեմատիկ էներգիան: Բերված զանգվածներ և բերված իներցիայի մոմենտ: Մեքենայական ազդեցատի շարժման հավասարումները և դրանց ինտեգրումը: Մեքենայի շարժման ուսումնասիրությունը էներգոզանգված դիագրամը (Վիտենբաուտերի) մեթոդով: Մեքենաների և մեխանիզմների շարժման անհավասարաչափությունը: Միջին արագությունը և շարժման անհավասարաչափության գործակից: Արագությունների կարգավորիչներ: Չանգվածների հավասարակշռում: Թափանիվը որպես արագության կարգավորիչ, դրա հաշվարկը: Մեխանիզմների էներգետիկ բնութագրերը: Մեքենային էներգետիկ բալանսի հավասարումը: Մեխանիկական ՕԳԳ: Բարձր կարգի մեխանիզմներ: Ատամնանիվային մեխանիզմներ: Ատամնանիվային մեխանիզմների դասակարգումը: Հիմնական երկրաչափական և որակական պարամետրերը: Ատամնանիվային բարդ մեխանիզմների կինեմատիկան: Տարածական ատամնանիվային մեխանիզմներ: Հիպերբոլիդային և պտուտակային ատամնանիվային մեխանիզմներ:

Բռունցքային մեխանիզմներ, դրանց դասակարգումը, կինեմատիկան և նախագծումը: Շփումը մեխանիզմների և մեքենաների մեջ: Շփման տեսակները:

2. **Ամբարձիչ փոխադրական մեքենաներ -3 կրեդիտ-90 ժամ**

Ամբարձիչ փոխադրական մեքենաներ: ԱՓՄ-ի դասակարգումը: Ամբարձիչ մեքենաների հիմնական մեխանիզմները: Բեռ բարձրացնող մեխանիզմ: Շաղարձային մեխանիզմ: Տեղափոխաղ մեխանիզմներ:

Ամբարձիչ մեքենաների կայունությունը:

Փոխադրական մեխանիզմների հիմնական հասկացություններ և հաշվարկի հիմունքներ:

Քարշային աշխատանքային օրգաններով փոխադրիչների հաշվարկը:

Ոչ քարշային աշխատանքային օրգաններով փոխադրիչների հաշվարկը:

3. **Էլեկտրատեխնիկա և էլեկտրոնիկայի հիմունքներ-4 կրեդիտ-120 ժամ**

Ներածություն: Հաստատուն հոսանքի էլեկտրական շղթաներ և դրանց հաշվարկման եղանակներ: Փոփոխական սինուսոիդալ հոսանքի ստացումը: Պարամետրերը: Գրաֆիկական պատկերումը: Գծային և ոչ գծային էլեկտրական շղթաների հաշվարկը: Փոփոխական էլեկտրական շղթայի հզորությունները: Հզորության գործակցի բարձրացումը: Եռաֆազ շղթաներ: Միացման սխեմաները, հզորությունները: Մագնիսական շղթաներ, դրանց վերլուծությունը և հաշվարկը: Տրանսֆորմատորների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, հիմնական պարամետրերը և աշխատանքային ռեժիմներ: Հատուկ տրանսֆորմատորներ: Հաստատուն հոսանքի մեքենաներ: Ասինխրոն եռաֆազ և միաֆազ մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը: Էլեկտրամատակարարում: Էլեկտրոնոկոն չափումներ և չափիչ գործիքներ:

Արդյունաբերական էլեկտրանիկայի հիմնական տարրերը: Կիսահազորոչային տարրերի հիմնական պարամետրերը: Կիսահազորոչային ուղղիչներ, ուժեղերարներ, տրիգերներ: Իմպուլսային տեխնիկայի տարրեր: Իմպուլսային գեներատորներ: Թվային միկրոթելեկտրոնիկայի հիմունքներ: Հասկացություն կիսահազորոչային միկրոինտեգրալային սխեմաների և միկրոպրոցեսորների մասին: Տիրիստրոչային սարքեր: Հասկացություն էլեկտրահաղորդակների կառավարման համար օգտագործվող անկանտակտ տիրիստրոչային ապարատների մասին:

4. **Հիդրավլիկայի հիմունքներ-5 կրեդիտ-150 ժամ**

Հիդրոստատիկա: Հիդրոստատիկական ճնշումը և նրա հատկությունները: Հեղուկի հարաբերական հանգիստը: Հիդրոստատիկական ուժի մեծության և կիրառման կետի որոշումը հարթ և կոր մակերևույթների վրա: Արքիմեդի օրենքը, մարմինների լողալու պայմանը: Հեղուկների կինեմատիկա: Շարժման ուսումնասիրման մեթոդները: Հեղուկների շիթային շարժումը: Հոսանքի հիդրավլիկական տարրերը: Անխզելիության հավասարումը տարրական շիթի և ամբողջ հոսանքի համար: Հիդրոդինամիկա: Շարժումների դասակարգումը: Հեղուկի շարժման հավասարումները իդեալական և իրական հեղուկների համար: Բեռնուլիի հավասարումը իդեալական և իրական հեղուկների համար: Բեռնուլիի հավասարումը ամբողջ հոսանքի համար: Էներգիայի տեղական և երկայնական կորուստները: Շարժման ռեժիմները՝ լամինար և տուրբուլենտ շարժումներ: Հիդրավլիկական հարվածի երևույթը: Հիդրավլիկական մեքենաների նշանակությունը և աշխատանքային պարամետրները:

Պոմպերի դասակարգումը և օգտագործման ոլորտները:

Կենտրոնախույղ պոմպի կոնստրուկցիան և աշխատանքը: Ծավալային պոմպերի կոնստրուկցիաները և աշխատանքի սկզբունքները:

5. **Նյութագիտություն և ԿՆՏ-3 կրեդիտ-90 ժամ**

Սև և գունավոր մետաղների արտադրությունը, ելանյութերը, սարքավորումները և մետալուրգիական հիմնական տեխնոլոգիական պրոցեսները:

Մեքենաշինության մեջ նախապատրաստական հիմնական տեխնոլոգիական պրոցեսների առանձնահատկություններն ու սարքավորումները »ձուլում, եռակցում և գոդում, մետաղների մշակումը ճնշմամբ-գլոցում, մամալում, քարշում, դրոշմում և այլն»:

Մետաղահատ հաստոցների դասակարգումը և մակնիշավորումը, մետաղների մշակումը կտրմամբ: Մշակման տեսակները, օգտագործվող գործիքները, գործիքների կառուցվածքը և երկրաչափությունը, գործիքանյութերը: Մետաղահատ հաստոցների կինեմատիկական սխեմաները և նրանց վերլուծումը: Մետաղահատ հաստոցների գլխավոր և մատուցման «օժանդակ» շարժումները, նրանց հիմնական հանգույցները, օգտագործվող հարմարանքները ու օժանդակ գործիքները: Կտրման տարրերը (t,s,n,v,T), անհրաժեշտ հզորության և կտրման ուժերի հաշվարկման մեթոդիկան:

6. **Չափագիտություն, ստանդարտացում և սերտիֆիկացում-4 կրեդիտ-120 ժամ**

Չափագիտությունը որպես գիտություն չափումների, դրանց միասնականության մեթոդների և պահանջվող ճշգրտության վերաբերյալ: Չափումների ընդհանուր տեսություն: Կառուցվածքային վերլուծության, փորձերի և չափումների մեթոդների և միջոցների մշակումը: Չափումների ճշգրտության որոշման մեթոդները: Միստեմատիկ սխալանք, պատահական սխալանք, գումարային սխալանք: Չափումների մեթոդների և գործիքների ընտրություն, չափիչ տեխնիկա: Լրիվ և ոչ լրիվ համափոխարինելիություն: Չափագիտության ստանդարտավորման և սերտիֆիկացման օրենսդրական հիմքը: Ստանդարտացման և սերտիֆիկացման բնագավառի տերմիններն ու հասկացությունները: Միջազգային ստանդարտացում: Սերտիֆիկացման կարգը: Սերտիֆիկացնող էլեկտրական, ոչ էլեկտրական և ռադիոտեխնիկական արժեքների բնութագիրը:

7. **Ջերմատեխնիկա-4 կրեդիտ-120 ժամ**

»Ջերմատեխնիկա« առարկան: Նրա կիրառությունը և կապը գյուղատնտեսության արտադրության տարբեր բնագավառների հետ: Թերմոդինամիկայի հիմունքները և հիմնական օրենքները: Էներգիայի փոխակերպման պրոցեսներ: Իրական գազեր, դրանց կիրառությունը: Ջերմային մեքենաների տեսական աշխատանքային ցիկլեր: Ներքին այրման շարժիչների իդեալական ցիկլերի աշխատանքային պայմանները: Դրանց համեմատական գնահատման վերլուծությունը: Ջերմատեխնիկական տեսության հիմնական դրույթներ: Ջերմահաղորդականություն: Կոնվեկտիվ ջերմափոխանակում: Ջերմային ճառագայթում: Բարդ ջերմափոխանցում: Ջերմափոխանցման ապարատների հաշվարկ: Ջերմափոխանցման ինտենսիվացման ուղիները: Էներգիայի աղբյուրներ: Վառելիքի տեսակներ և բնութագրեր, դրա այրման պրոցեսի հաշվարկ: Էներգիայի այլընտրանքային աղբյուրներ: Ջերմաուժային սարքավորումներ: Կոմպրեսորներ և սառնարանային սարքավորումներ: Կաթսայական տեղակայանքներ: Միսցավոր և տուրբինային ջերմային մեքենաներ:

8. **Բուսաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիա-3 կրեդիտ-90 ժամ**

Բուսաբուծությունը որպես գիտություն և գյուղատնտեսության արտադրության ճյուղ, նրա խնդիրները:

Դաշտային մշակաբույսերի խմբավորումը, շրջանցված սորտերի բնութագրումը, նրանց հիմնական կենսաբանական և մշակութային առանձնահատկությունները: Մարգագետնային կերարտադրություն, խոտհարքների և մարգագետինների բարելավումը: Բանջարաբուծությունը որպես բուսաբուծության ճյուղ: Կարևորագույն բանջարային բույսերի կենսաբանական առանձնահատկությունները և մշակութային տեխնոլոգիաները բաց և փակ ջրանցքում:

9. **Անասնաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիա -3 կրեդիտ 90 ժամ**

Գյուղ. կենդանիների ծագումը, կենսաբանական և տնտեսական առանձնահատկությունները, բուծման մեթոդները, լիարժեք և արդյունավետ կերակրման հիմունքները:

Տավարի կաթի և մսի արտադրության տեխնոլոգիան, խոզի մսի արտադրության չափորոշիչները և խոզերի բտման տեսակները:

Ոչխարների և այծերի բրդային, մսային, կաթնային մթերատվության արտադրութ-

յան տեխնոլոգիական առանձնահատկությունները:

Թռչունի մսի և ձկնի արտադրության տեխնոլոգիան, բրոյլերների արտադրությունը: Չիաբուծության վարման տեխնոլոգիան և ձիերի օգտագործման հիմնախնդիրները: Մեղվաբուծության և ձկնաբուծության զարգացման հեռանկարները և մեղրի ու ձկնամսի արտադրության տեխնոլոգիան:

10. **Հիդրոտեխնիկական կառուցվածքներ-6 կրեդիտ-180 ժամ**

Ներածություն: Տեղեկություններ մակերևութային հոսանքների՝ հեղեղների և սելավների մասին, հունների ձևավորումը, հունների կտրվածքները, ջրաբերուկներ, քարացեխային զանգվածներ, հեղեղային հոսանքների ելքերի որոշումը, պայքար ջրհավաք մակերեսի էրոզիայի դեմ, կարգավորող կառուցվածքներ, ընդերկայնական և ընդլայնական թմբեր, շպորներ, հատակային շեմքեր, պայքար հեղեղների դեմ, պայքար սելավների դեմ, սելավատար և սելավուղող կառուցվածքներ, հողային աշխատանքներ, բետոնային աշխատանքներ, երկաթ-բետոնային աշխատանքներ, հավաքովի երկաթ-բետոնային աշխատանքներ, պայթեցման աշխատանքներ, հողային աշխատանքների կատարումը հիդրոտեխնիկական միջոցով, ցցային և շպունտային աշխատանքներ, հիդրոտեխնիկական կառուցվածքների աշխատանքների կամակերպումը, շինարարության տեխնիկական նորմավորումը, շինարարության կազմակերպումը (օրացուցային պլան, շինարարության գլխավոր հատակագծի մշակում), շինարարության նախագծման փուլերը, շինարարության նախահաշվային արժեքի որոշումը:

11. **Ավտոմոբիլներ և տրակտորներ-5 կրեդիտ-150 ժամ**

Տրակտորների և ավտոմոբիլների դերը գյուղատնտեսական արտադրության համալիր մեքենայացման գործում, տրակտորների և ավտոմոբիլների սահմանումը, դասակարգումը և մակնիշավորումը, կիրառվող տերմինները, ընդհանուր կառուցվածքը՝ բաղկացուցիչները, դրանց նշանակությունը և հարմարադասման կիրառվող սխեմաները, շարժիչների սահմանումը և տարատեսակները, ավտո տրակտորային միացավոր ներքին այրման շար-իչների (ՆԱՇ) դասակարգումը և մակնիշավորումը, ընդհանուր կառուցվածքը՝ մեխանիզմներն ու համակարգերը, դրանց նշանակությունը, հարմարադասման սխեմաները, տարատեսակները, կառուցվածքը և աշխատանքը, շահագործական պայմանների նկատառումով ՆԱՇ - երի ներկայացվող պահանջները և դրանց ընտրության սկզբունքները, ոչ ավանադական կառուցվածքի ՆԱՇ - երի տարատեսակները, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը, ՆԱՇ - երի արդիականացումը, դրանցում այլընտրանքային վառելանյութերի կիրառման նպատակով, տրակտորների և ավտոմոբիլների ուժային փոխանցումների, ընթացքային մասերի, դեկավարման համակարգերի, բանվորական և օժանդակ սարքավորումների նշանակությունը, տարատեսակները, հարդարադասման կիրառվող սխեմաները, կառուցվածքը և աշխատանքը:

Դասընթացի խնդիրներն ու նպատակը, տրակտոր- և ավտոմոբիլաշինության զարգացման հիմնական միտումները; տրակտորների և ավտոմոբիլների շահագործական հատկանիշները և գնահատման ցուցանիշները; տրակտորների և ավտոմոբիլների վրա ազդող արտաքին ուժերը, դրանց բնույթը և որոշման մեթոդները; շարժման հավասարումները; անիվներին փոխանցվող տանող մոմենտ և շոշափող շարժիչ ուժ; նորմալ հակազդումներ; թրթուրավոր շարժիչների կինեմատիկական առանձնահատկությունները; ճնշման կենտրոն, թրթուրների նկատմամբ նորմալ ճնշումների բաշխումը; տրակտորի հզորության բալանս; ավտոմոբիլի դինամիկական գործոն և դինամիկական բնութագիր; թափառքի ժամանակ և ճանապարհ, արգելակային դինամիկա, վեռելիքային շահավետություն տրակտորների և ավտոմոբիլների կայունություն, ընթացքի սահունություն:

Շարժիչային և հնոցային վառելանյութերի, քսայուղերի և քսուկների նշանակությունը, դասակարգումը, մակնիշավորումը և արտասահմանյան համարժեքների հետ համափոխարինելիությունը; հումքերը, ստացման, վերամշակման և մաքրման եղանակները, բաղադրությունը և տարրական կազմը, ֆիզիկաքիմիական հատկությունները, կիրառելիության ոլորտները և սահմանափակիչները; վառելանյութերի ջերմաստեղծ ունակությունները, այրման առանձնահատկությունները դրանց նշանակությունից և օգտագործման պայմաններից կախված; այրման արգասիքների կազմը, դրանց բացասական ազդեցությունը շրջապատող միջավայրի վրա և վտանգավորության նվազեցման հնարավոր ու կիրառվող մեթոդները; այլընտրանքային

շարժիչային վառելանյութերը և դրանց կիրառումը սահմանափակող գործոնները; վառելանյութերի և քսանյութերի որակի գնահատման ցուցանիշները և մեթոդները, դրանց պահպանման և ռացիոնալ օգտագործման, փոխադրման, ուտիլիզացման կանոնները:

12. **Գյուղատնտեսական մթերքների վերամշակման տեխնոլոգիա և սարքավորումներ-4 կրեդիտ-120 ժամ**

Վերամշակման տեխնոլոգիաների գործընթացների կազմակերպման հիմնական դրույթները, նրանով օպտիմալացումը, մեխանիզացումը և ավտոմատացումը, չափանիշների ու սահմանափակումների համակարգերը:

Հումքի և կիսաֆաբրիկատների տեխնոլոգիաներ և մեխանիկական մշակման սարքավորումներ:

Օգտագործվող սարքավորումների դասակարգումը, նրանց հաշվարկման եղանակները, գիտական նվաճումների լուսաբանումը:

Հումքի, կիսաֆաբրիկատների և պատրաստի արտադրանքի ջերմամշակման սարքավորումներ:

Բազմաչափիչ սարքավորումներ:

Փոխադրական սարքավորումներ:

Տարաների պատրաստման գործընթացների կազմակերպման հիմնական դրույթները, նրանց օպտիմալացումը, մեխանիզացումը և ավտոմատացումը, չափանիշների ու սահմանափակումների համակարգերը:

Փաթեթավորող մեքենաները և ավտոմատները:

Մթերքի հատկությունների և փաթեթավորման գործընթացի միջև եղած փոխազդեցությունները:

13. **Գյուղատնտեսության մեքենայացում-4 կրեդիտ-120 ժամ**

Առարկան բաղկացած է “Գյուղատնտեսական և մեխորատիվ մեքենաներ”, “Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործում” և “Անասնապահական ֆերմաների մեքենայացում” բաժիններից:

Առաջին բաժնում ուսանողը պետք է ծանոթանա հողի մշակության, ցանքի ու տնկման, բույսերի խնամքի ու պաշտպանության, կերերի հավաքման ու հացահատիկային ու այլ մշակաբույսերի բերքահավաքի, հացահատիկի գտման ու տեսակավորման, ինչպես նաև շինարարական ու մեխորատիվ մեքենաների ընդհանուր կառուցվածքի ու աշխատանքի սկզբունքին:

Երկրորդ բաժնում ուսանողը պետք է ծանոթանա արտադրական գործընթացների տեսակներին, մեքենատրակտորային ագրեգատների (ՄՏԱ) տեխնոլոգիական և շահագործական բնութագրերի, տեխնիկատնտեսական ցուցանիշների որոշման սկզբունքների, պատկերացում կազմի շրջադարձի ձևերի կշարժման եղանակներին, ՄՏԱ համալրման սկզբունքների, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի (հացահատիկ, կարտոֆիլ) մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաների, ինչպես նաև տրակտորների և գյուղ. մեքենաների տեխնիկական շահագործման սկզբունքների մասին:

Անասնապահական ֆերմաների մեքենայացում բաժնում ուսանողը պետք է ծանոթանա կերերի նախապատրաստման ու բաշխման, ջրամատակարարման, կթի և կաթի նախնական մշակման, ոչխարների խուզի ու բրդի տեսակավորման, ինչպես նաև գոմաղբի հավաքման ու հեռացման մեքենասարքավորումների հետ:

14. **Գյուղ. մեխորատիվ մեքենաներ-3 կրեդիտ-90 ժամ**

Ներածություն: Ընդհանուր տեղեկություններ մեխորատիվ և շինարարական մեքենաների, դրանց հակաֆիլտրացիոն երեսապատման մեքենաներ: Ջրանցքի նորոգման և խնամքի մեքենաներ: Ջրանցքամաքրիչներ: Փակ հորիզոնական դրենաժի և խողովակաշարի անցկացման մեքենաներ: Հողերի իրացման նախապատրաստման և կուլտուր-տեխնիկական աշխատանքների մեքենաներ՝ թփուտահանիչ, անտառի ջարդման և կտրման մեքենաներ, աքցանավոր ծառատապալման մեքենաներ, քարհան մեքենաներ, հողերի մշակման մեքենաներ: Հողերի ջրման նախապատրաստման մեքենաներ, դաշտերի հարթեցման և հարթագծման մեքենաներ, կոշտ բացվող և շարժական շրջանակով մեքենաներ, շերտի ծավալի և բարձրութ-

յան ավտոմատ կանոնավորման հարթագծիչներ: Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման մեքենաներ և տեղակայանքներ:

15. **Ճարտարագիտական հոգեբանություն և էրգոնոմիկայի հիմունքներ-7 կրեդիտ-210 ժամ**

Ճարտարագիտական հոգեբանության նպատակը և խնդիրները: “Մարդ-մեքենա-միջավայր” համակարգում օպերատորի դերը:

Հոգեբանության անատոմոֆիզիոլոգիական հիմունքները:

Մարդու գործունեության հոգեֆիզիոլոգիական և սոցիալական առանձնահատկությունները: Օպերատորի հոգեմոտորիկական և ռեակցիանաբար: Հիշողությունը և մտածելակերպը: Էմոցիաները և կամքը: Օպերատորի անհատականությունը և մասնագիտական գործունեությունը:

Օպերատորի աշխատունակությունը և հուսալիությունը: Բեզարեցումը և նրա հետևանքները, ծխախոտի և ալկոհոլի ազդեցությունը աշխատանքի անվտանգության և արտադրողականության վրա: Օպերատորի հմտությունը, նրա ձևավորումը, կատարելագործումը և այդ նպատակով օգտագործվող տեխնիկական միջոցները:

Լարված իրադարձությունների բնույթը և տեսակները: Լարված իրադարձությունում հոգեբանական ձևերը: Լարված իրադարձություններում գործողությունների պատրաստության ընդհանուր հոգեբանական բնութագիրը:

Էրգոնոմիկան որպես գիտական և նախագծման առարկա, նրա նշանակությունը, նպատակը և խնդիրները, կապը այլ գիտությունների հետ:

Էրգոնոմիկայի մեթոդները և տեխնիկական միջոցները: Էրգոնոմիկական հետազոտությունների ընդհանուր բնութագիրը: Էրգոնոմիկական մեթոդների դասակարգումը: Մարդու և մեքենայի միջև գործառությունների բաշխման մեթոդները: Էրգոնոմիկական գնահատումը:

Աշխատանքային և գործունեության տեսակների էրգոնոմիկական վերլուծության սկզբունքները և հետազոտությունները: Կատարողական (պերցեպտիվամոտորային) գործողությունների ֆունկցիոնալ կառուցվածքը: Կատարողական գործողությունների ուսումնասիրման կառուցվածքային ամբողջական մոտեցման ձևերը :

Էրգոնոմիկան տարբեր ոլորտներում: Էրգոնոմիկան արդյունաբերությունում, գյուղատնտեսությունում և անտառատնտեսությունում, շինարարությունում, տրանսպորտում, ռազմական ոլորտներում:

Մոդելավորումը էրգոնոմիկայում :

Էրգոնոմիկան և աշխատանքի անվտանգության հոգեբանությունը:

16. **Ճանապարհային երթևեկության անվտանգություն-4 կրեդիտ-120 ժամ**

Ճանապարհա-տրանսպորտային պատահարները (ՃՏՊ) որպես տեխնադիմ վթարներ և դրանց պատճառական հիմնավորումը: Վարորդ-ավտոմոբիլ-միջավայր համակարգի բաղադրիչների ազդեցությունը ՃՏՊ առաջացման վրա:

Երթևեկության կազմակերպման եղանակները բնակավայրերում, մայրուղիներում, խոշոր քաղաքներում, երթևեկության կազմակերպումը ճանապարհների խաչմերուկներում, լուսաֆորային կարգավարման նախագծում:

Ավտոմոբիլի ակտիվ և պասիվ անվտանգությունը և դրանց բարելավումը, էկոլոգիական անվտանգությունը և դրա բարելավումը, հետվթարային անվտանգությունը և դրա բարելավումը, վարորդի և ուղևորների էվակուացիան վթարված ավտոտրանսպորտային միջոցներից:

Վարորդների պատրաստումը և դրանց առանձնահատկությունները ժամանակակից երթևեկության պայմաններում:

Երթևեկության անվտանգության խնդիրների կազմակերպումը ավտոտրանսպորտային ընկերություններում:

17. **Բժշկական օգնությունը արտակարգ իրավիճակներում-3 կրեդիտ-90 ժամ**

Քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայության գործունեության իրավական հիմքերը: Աղետների բժշկագիտական ծառայության կազմակերպչական կառուցվածքը և հիմնական խնդիրները, նրա տեղը և դերը փրկարարական աշխատանքների իրականացման ընթացքում: Անհատական պաշտպանության բժշկական միջոցների բնութագիրը և օգտագործման կարգը: Ֆարմակոլոգիայի և համաճարակաբանության հիմունքները: Վնասող գործոնների անատոմոֆիզիոլոգիա-

կան ազդեցությունը մարդու վրա: Առաջին բուժ. օգնության կազմակերպումը վնասման օջախներում: Կրիտիկական իրավիճակներ, վերակենդանացման միջոցառումներ: Արյունոտություն, սրտային արյունոտության դադարեցման ձևերը: Օգնության ձևերը սուր հոգեկան խանգարումների դեպքում:

18. **Ինժեներա-տեխնիկական ապահովումն արտակարգ իրավիճակներում-8 կրեդիտ-240 ժամ**

Ներածություն: Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համակարգը, խնդիրներն ու նշանակությունը: Քաղաքացիական պաշտպանության կառուցվածքն ու կազմավորումները: Արտակարգ իրավիճակներ, դրանց դասակարգումը, բնութագրերը և կանխարգելման ուղիները: Ռ-ադաքցիոն և քիմիական վարակման օջախներ: Տեղանքի ռադիոակտիվ վարակում, ռադիոակտիվ վարակվածության աղբյուրները և ռադիոակտիվ ճառագայթման չափման միավորները: Մարտական թունավոր քիմիական նյութերի դասակարգումը, բնութագրերը, ներգործության ձևերը և դրանցից պաշտպանվելու ձևերը: Ռ-ադիաքցիոն և քիմիական իրադրության գնահատման մեթոդները: Դոզաչափման և քիմիական հետազոտության սարքերի տեսակները, կառուցվածքը և աշխատանքի սգրունքները: Բնակչության պաշտպանության կազմակերպումը արտակարգ և պատերազմական իրավիճակներում: Ապաստարաններ, հակառադիաքցիոն և պարզագույն քաղաքացիական պաշտպանության միջոցների տեսակները, դրանց պահպանման, բաշխման և օգտագործման կարգը: արտակարգ իրավիճակների ռիսկի գնահատումը: Ռ-իսկի կվանտիֆիկացիան, անհատական ռիսկի ուսումնասիրման և գնահատման մեթոդները: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում գյուղատնտեսական օբյեկտների գործունեության կայունության ապահովման հիմնական ուղղություններն ու մեթոդները: Արտակարգ և պատերազմական իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վթարային-վերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը: Գյուղատնտեսական արտադրության վարումը ռադիոակտիվ աղտոտվածության պայմաններում:

19. **Նյութերի դիմադրություն-7 կրեդիտ-210 ժամ**

»Նյութերի դիմադրություն« դասընթացի դերն ու նշանակությունը և դրա տեղը ուսումնական պրոցեսում:

»Նյութերի դիմադրություն« առարկան ուսումնասիրում է շինարարական և մեքենաշինական կառուցատարրերի և դրանց մասերի ամրության, կոշտության, կայունության և դիմացկանության խնդիրները, որոշում է կառուցատարրերի առանձին մասերի նախագծման համար կտրվածքի չափերի ընտրության մեթոդները: »Նյութերի դիմադրություն« առարկայի օրենքների և հիփոթեզների միջոցով կատարվում է մի շարք գործնական խնդիրների լուծումներ, դրանք են՝

- առանձին կառուցվածքների և մեխանիզմների չափերի որոշումը;
- կառուցվածքների տնտեսապես արդյունավետ ձևի ընտրությունը;
- գյուղատնտեսական մեքենաների և շինարարական կառուցվածքների և այլ սարքերի առանձին մասերի նախագծման գիտական մեթոդների հիմնավորումը:

«Նյութերի դիմադրության» դասընթացի նպատակն է.

-ուսանողներին ծանոթացնել փորձնական և գործնական աշխատանքների կատարման հիմունքներին;

-ուսանողներին սովորեցնել արտաքին բեռնվածքի ազդեցության տակ գտնվող ճարտարագիտական կառուցվածքների ամրության, կոշտության, կայունության որոշման տեսություններն, որը թույլ է տալիս ճիշտ պատկերացնել ցանկացած կառուցվածքի և դրա բոլոր մասերի աշխատանքը, հնարավորություն է տալիս ստեղծել նապտակահարմար ձևի կառուցվածքներ;

-սովորեցնել ճիշտ նշանակել առանձին կոնստրուկցիաների չափերը և հակառարը՝ ստուգել գոյություն ունեցող կառուցվածքների չափերի բավարարությունը և տալ կառուցվածքների ձևի ու չափերի գնահատականը:

«Նյութերի դիմադրության» դասընթացը հիմնականում հիմնվում է մաթեմատիկայի, տեսական մեխանիկայի, ֆիզիկայի, ինչպես նաև քիմիայի օրենքների վրա: Նյութերի դիմադրության տեսակնա հետազոտությունների բոլոր ընդհանրացումները կատարվում են մաթեմատիկայի դրույթների օգնությամբ

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

Բիռեկոլոգիա

Հիդրոգագողինամիկա

ՄԱՍՆԱԳԻՏԱՅՍԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈՎ

Հանրապետական բաղադրիչ

1. **Փրկարարական տեխնիկա և մեքենաներ-2 կրեդիտ-60 ժամ**

Փրկարարական միջոցների դասակարգումը, նշանակությունը և բնութագիրը: Փրկարարական աշխատանքներում օգտագործվող մեքենաների և մեխանիզմների տեսակները, կառուցվածքը և գործողության սկզբունքը, դրանց շահագործման նորմերը, նորոգումների և ամրոտիզացիոն ժամկետները, և տեխնիկական սպասարկումների իրականացումը: Փրկարարական տեխնիկայի և մեքենաների պահպանման կազմակերպումը:

2. **Արտադրական սանիտարիա և աշխատանքի հիգիենա-7 կրեդիտ-210 ժամ**

Հասկացություն արտադրական սանիտարիայի մասին, արտադրական միջավայրի ազդեցությունը մարդկանց վրա: Միջավայրի օդերևութաբանական պայմանները: Վնասակար և թունավոր նյութեր, դրանց նորմավորումը և դրանց ազդեցությունից պաշտպանվելու եղանակները: Արտադրական օդափոխություն, նպատակը, իրականացման ձևերը, հաշվարկի եղանակները, օգտագործվող սարքավորումները: Ջեռուցում, նպատակը, իրականացման ձևերը, հաշվարկի եղանակները, օգտագործվող սարքավորումները: Արտադրական լուսավորություն, նպատակը, իրականացման ձևերը, հաշվարկի եղանակները, օգտագործվող սարքավորումները: Ջրամատակարարում և կոյուղի, իրականացման ձևերը, կիրառվող սխեմաները, օգտագործվող տեխնիկական միջոցները: Աղմկապաշտպանություն և վիբրոպաշտպանություն: Պաշտպանություն ճառագայթահարումից: Անվտանգությունը թունաքիմիկատների և պատրաստանյութերի հետ աշխատելիս:

3. **Արտադրական անվտանգության-7 կրեդիտ-210 ժամ**

Անվտանգության տեխնիկայի ընդհանուր խնդիրները: Արտադրական վտանգավոր և վնասակար գործոններ: Մեքենաների և սարքավորումների վտանգավոր գոտիներ: Անվտանգության ապահովման ընդհանուր տեխնիկական միջոցներ: Էլեկտրոանվտանգություն: Պաշտպանական միջոցառումներ և անհատական պաշտպանական միջոցներ: Աշխատանքի անվտանգությունը բուսաբուծությունում և անասնաբուծությունում: Գյուղ տեխնիկայի նորացման և տեխ. սպարկման աշխատանքների անվտանգությունը: Տրանսպորտային և բեռնման-բեռնափանան աշխատանքների անվտանգությունը: Աշխատանքի անվտանգությունը էներգո-ժային տեղակայանքների և սարքավորումների շահագործման ընթացքում:

4. **Հրդեհապայթյունային անվտանգություն-5 կրեդիտ-94 ժամ**

Հրդեհ, մարդկանց վրա հրդեհի վնասող գործոնների ազդման հավանականության որոշումը: Այրվող գազերի, դյուրավառ հեղուկների և այրվող փոշիների հնարավոր առավելագույն քանակությունների և պայթման ավելցուկային ճնշման արժեքի որոշումը: Արտադրությունների դասակարգումը ըստ հրդեհապայթյունանվտանգության: Հրդեհների տեղայնացման և մարման միջոցներ: Տեխնոլոգիական սարքավորումների պայթյունապաշտպանություն: Հրդեհների և պայթյունների կանխարգելում: Պայթուցիկ նյութերի և պայթեցման միջոցների դասակարգումը: Պայթեցման աշխատանքների կազմակերպումը և անվտանգությունը: Պայթուցիկ նյութերի փոխադրման, պահպանման և հաշվառման կարգը: Տեղեկատվության կազմակերպումը հրդեհների և պայթեցման աշխատանքների ժամանակ:

5. **Դժբախտ դեպքերի փորձաքննություն-4 կրեդիտ-120 ժամ**

Փորձաքննության կազմակերպումն ու վարույթը. փորձագիտության նպատակը և

խնդիրները, փորձաքննության տարատեսակներն ու դրանց համառոտ բնութագրերը, դատական և ծառայողական փորձագետների իրավունքներն ու պարտականությունները, փորձաքննության ելակետային նյութերը, փորձաքննություն նշանակելու մասին որոշումը և փորձագետի տեխնիկական միջոցի կամ սարքավորման պարամետրերի հաշվարկը:

Դժբախտ պատահարների առաջացման գործոնների գնահատումը, չափումը: Նախագգուշական միջոցների մշակումը տեխնաձին և բնական աղետների կանխելու տեխնիկական հնարավորության փորձագիտական հետազոտումը և վերլուծությունը:

Փորձագետի աշխատանքի մեքենայացումը և ավտոմատացումը:

6. **Տարերային և տեխնաձին աղետներ-7 կրեդիտ-210 ժամ**

Վտանգավոր բնական երևույթների (երկրաշարժեր, հրաբուխներ, սողանքներ, փյուզումներ, ձնահոսքեր, ցիկլոններ, ջրհեղեղներ, անտառային հրդեհներ, մրրիկներ, համաճարակներ և այլն) բնութագրերը և առաջացման գոտիները: Տարերային երևույթների զարգացման առանձնահատկությունները, դրանց ազդեցությունը մարդկանց, տնտեսության և շրջակա միջավայրի վրա: Պաշտպանության եղանակները և միջոցառումները:

Տնտեսության օբյեկտների դասակարգումը և հիմնական բնութագրերը, վտանգավոր տեխնոլոգիաների և արտադրությունների դասակարգումը: Քիմիական, ռադիոակտիվ, հրդեհային և պայթյունային վտանգավորության օբյեկտներ, մարդկանց հնարավոր վնասման տարածքներ և գոտիներ: Տնտեսության օբյեկտների գործունեության կայունությունը: Կայունության վրա ազդող գործոններ, կայունության որոշման մեթոդիկան: Տնտեսության օբյեկտների, տեխնիկական համակարգերի, տեխնոլոգիական պրոցեսների փաստացի կայունության գնահատումը արտակարգ իրավիճակներում: Կայունության բարձրացման եղանակները: Վնասման օջախների և վտանգավոր գոտիների պարամետրերի կանխագուշակումը:

7. **Ռադիացիոն պաշտպանություն և գյուղատնտեսության վարումը ռադիոակտիվ աղտոտվածության պայմաններում -7 կրեդիտ-210 ժամ**

Արտակարգ իրավիճակներում ռադիացիոն պաշտպանության եղանակները: Ռադիացիոն իրադրության գնահատման կարգը և հաշվարկը: Բնակչության և նյութական արժեքների պաշտպանության կանխարգելիչ միջոցառումներ: Հակառադիոակտիվ պաշտպանական միջոցառումներ իրականացնող ուժերը: Կիրառվող հակամիջոցառումները ռադիոակտիվ տեղումներին հաջորդող սկզբնական, միջին և ուշ ժամանակահատվածներում: Ռադիոնուկլիդների հեռացումը սննդամթերքից տեխնոլոգիական մշակման ընթացքում:

8. **Քիմիական պաշտպանություն-4 կրեդիտ-120 ժամ**

Արտակարգ իրավիճակներում քիմիական պաշտպանության եղանակները: Քիմիական իրադրության գնահատման կարգը և հաշվարկը: Բնակչության և նյութական արժեքների պաշտպանության կանխարգելիչ միջոցառումներ: Բնակչության պաշտպանության կազմակերպումը: Հակաքիմիական պաշտպանական միջոցառումներ իրականացնող ուժերը:

9. **Տեղեկատվական տեխնիկա և կապի միջոց-4 կրեդիտ-120 ժամ**

Կապի ցանցերի դասակարգումը: Կապի անալոգային և թվային համակարգեր: Էլեկտրական բազմահաղորդչային կապի համակարգեր: Ռադիո-ռելեային և արբանյակային կապի համակարգեր: Կապի երկրորդային ցանցեր: Ղեկավար կետերի կապի հանգույցները: Տեղեկատվական համակարգեր: Կապի և տեղեկատվական համակարգերի և միջոցների տեխնիկական վիճակի հսկումը: Կապի և տեղեկատվության կազմակերպման հիմունքները:

10. **Կենսագործունեության անվտանգության տեսական հիմունքներ -2 կրեդիտ-60 ժամ**

Հիմնական հասկացությունները և ձևակերպումները:

Ռիսկի թույլատրելի հիմնադրույթները: Կենսագործունեության անվտանգության ապահովման սկզբունքները, մեթոդները և միջոցները:

Կենսագործունեության անվտանգության կառավարման հիմունքները: “Մարդ-մեքենա-միջավայր” համակարգի ուսումնասիրությունը: Համակարգային մոտեցումը Կենսագործունեության անվտանգության կառավարման ընթացքում: Կառավարման ֆունկցիաները, միջոցները: Կենսագործունեության անվտանգության վերլուծության և նախագծման տրամաբանա-մեթոդական սխեման:

Կենսագործունեության անվտանգության բժշկակենսաբանական հիմունքները: Մարդու օրգանիզմի ադապտացիան տարբեր պայմանների նկատմամբ: Սենսորային համակարգերի բնութագիրը անվտանգության տեսակետից: Միջավայրի գործոնների կառավարումը:

Կենսագործունեության անվտանգության հոգեբանությունը: Մարդու հոգեկան պրոցեսները և վիճակը: Գործունեության մոտիվացիան: Անվտանգության բարձրացման հոգեբանական մեթոդները:

11. **Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն-6 կրեդիտ-180 ժամ**

Կենսոլորտ և մարդը: Էկոհամակարգեր, օրգանիզմի և միջավայրի փոխհարաբերությունները: Ագրոէկոհամակարգերը և դրանց գործելակերպը տեխնոգենեզիսի պայմաններում: Շրջակա միջավայրի գրքալիմնախնդիրները: Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և բնության պահպանության էկոլոգիական սկզբունքները: Միջազգային համագործակցությունը և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները: Մթնոլորտի օդի, ջրի, հողերի, բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունը և դրանց արդյունավետ օգտագործումը: Զիմիացման էկոլոգիական հիմնախնդիրները: Մեքենայացման, հողերի, ոռոգման և չորացման էկոլոգիական հիմնախնդիրները: Երկրագործության ավանդական և այլընտրանքային համակարգերը: Էկոլոգիական տեսակետից անվտանգ գյուղատնտեսական մթերքների արտադրության տեխնոլոգիաները: Կայուն էկոհամակարգերի ստեղծման սկզբունքները: Ռեսուրսախնայողական տեխնոլոգիաները գյուղատնտեսության մեջ: Ագրոէկոլոգիական մոնիթորինգ, տարածքների էկոլոգիական վիճակի գնահատումը: Էկոլոգիական քաղաքականությունը և գյուղատնտեսության էկոլոգիացման հիմնախնդիրները:

12. **Վթարային փրկարարական աշխատանքների կազմակերպում -5 կրեդիտ-150 ժամ**

Վթարային-փրկարարական աշխատանքների տեսակները: Ուժերի և միջոցների կարգը փրկարարական աշխատանքներ իրականացնելիս: Փրկարարական աշխատանքներ իրականացնող ուժերի պատրաստականության մակարդակի որոշումը, փրկարարների պատրաստման և ատեստավորման կարգը: փրկարարական-որոնողական աշխատանքների անցկացման հիմնական տեխնոլոգիաները: Փրկարարական աշխատանքների անցկացման առանձնահատկությունները բնական և տեխնոգեն բնույթի արտակարգ իրավիճակների պայմաններում: Արտակարգ իրավիճակներում վթարային-փրկարարական աշխատանքների անվտանգությունը: Անվտանգ պայմանների ապահովման մեթոդները: Փրկարարների մասնագիտական և բարոյա-հոգեբանական պատրաստվածության մակարդակի բարձրացման միջոցառումներ:

13. **Մեքենաների հուսալիություն և նորոգում-5 կրեդիտ-105 ժամ**

Հուսալիությունը որպես տեխնիկական օբյեկտի (սարքավորում, մեքենա, համակարգ) համալիր հատկություն: Երկարակեցությունը և անվտանգությունը որպես հուսալիության հիմնական տարրեր: Վթարները և կատաստրոֆաների հիմնական աղբյուրների անվանացանկը: Վթարների և կատաստրոֆաների դասակարգումը և վիճակագրությունը: Վթարների և կատաստրոֆաների կանխագուշակումը: Ռիսկի տեսության հիմունքները: Ռիսկի անալիզը և նորմատիվ արժեքները: Ռիսկի վտանգի նվազեցումը: Վթարային պատրաստականությունը: Ռիսկի կառավարում և թուլլատրելի ռիսկ:

14. **Ավտոմատիկայի կիրառումը տեխնիկական համակարգերում -3 կրեդիտ-90 ժամ**

Ներածություն: Ընդհանուր տեղեկություններ ավտոմատ կառավարման հանա-

կարգերի վերաբերյալ:

Ավտոմատիկայի էլեմենտներ, դրանց ստատիկ բնութագրերը և դասակարգումը: Տվիչներ, ռելեներ, ուժեղարարներ, կատարող մեխանիզմներ, տրամաբանական էլեմենտներ: Ինքնահավասարման երևույթը ավտոմատացման օբյեկտներում:

Ավտոմատ կառավարման համակարգեր, դրանց դինամիկ բնութագրերը: Ժամանակային և հաճախական բնութագրեր: Փոխանցման ֆունկցիա հասկացությունը: Էլեմենտար դինամիկ օղակներ, դրանց դասակարգումը և միացման եղանակները:

Ավտոմատ կառավարման համակարգերի կայունությունը: Գծային համակարգերի կայունության որոշման մեթոդները, կայունության չափանիշները կարգավորման պրոցեսի որոշական ցուցանիշները: Ոչ գծային համակարգերի կայունության որոշման մեթոդները:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

Այրման և պայթման տեսություն 50+25

Արտակարգ իրավիճ. հոգեբանական կայունություն 50+25

ՖԱԿՈՒԼՏԵՏԻՎ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈՎ

Տեսական ուսուցման ընդհանուր ժամանակը

(45ժx-----շաբաթ)

4.1 Առկա ձևով ուսուցման դեպքում լսրանային պարապմունքներին պետք է տրամադրվի յուրաքանչյուր ուսումնական դասընթացին հատկացվող ժամաքանակի 50%-ից ոչ պակաս, իսկ հեռակա ձևով ուսուցման դեպքում՝ 10%-ից ոչ պակասը:

5. 310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում (ազրոարդյունաբերական համալիրում) մասնագիտությանը տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման ժամկետները

5.1. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման ժամկետը, ներառյալ ուսանողի հետազոտական աշխատանքը, առկա ուսուցման ձևով 242 շաբաթ է, որից.

- տեսական ուսուցումը՝ 150 շաբաթ:

- քննաշրջանները՝ 27 շաբաթ:

- պրակտիկաները՝ 21 շաբաթ, որից

ուսումնական՝ 6 շաբաթ

արտադրական՝ 10 շաբաթ

նախադիպլոմային՝ 5 շաբաթ:

- եզրափակիչ պետական որակավորումը, ներառյալ ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը՝ 10 շաբաթ

- արձակուրդները՝ 34 շաբաթ:

Մասնագիտացնող ամբիոնը յուրաքանչյուր ուս.տարի կազմում և հաստատում է դիպլոմային նախագծերի նորացված թեմատիկայի բանկ: Դիպլոմային նախագծի թեման ուսանողը ընտրում է երրորդ կուրսում արտադրական պրակտիկա մեկնելուց առաջ:

Դիպլոմային նախագծի կատարման ժամանակացույցը, ընթացիկ վերահսկման և ատեստավորման ձևը, պաշտպանության թույլատրման կարգը սահմանում է ֆակուլտետը, որը հաստատում է ԲՈՒՀ – ի գիտական խորհուրդը:

Նախորոք կազմվում է նախագծի կատարման ժամանակացույցը, ամբիոնի կողմից վերահսկվում է կատարման ընթացքը, կազմակերպվում է նախնական պաշտպանություն, որից հետո թույլատրվում է նախագիծը ներկայացնել պաշտպանության:

5.2.Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող անձանց համար ճարտարագետ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրեր յուրացման ժամկետները հեռակա ուսուցման ձևով երկարացվում են մինչև 1 տարի՝ սույն պետական կրթական չափորոշիչի թ.1.2-ով սահմանված ժամկետի նկատմամբ:

5.3.Ուսանողի ուսումնական բեռնվածքի առավելագույն ծավալը սահմանվում է շաբաթական 45 ժամ՝ ներառյալ լսարանային և արտալսարանային (ինքնուրույն) աշխատանքները:

5.4.Առկա ուսուցման ձևով սովորող ուսանողի լսարանային պարապմունքների ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 30 ժամ: Նշված ծավալում չեն ընգրկվում ֆիզիկական կուլտուրայի և ֆակուլտատիվ դասընթացների դասաժամերը: Ուսումնական տարվա տեսական ուսուցման տևողությունը 34 շաբաթ է:

5.5.Հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողի համար պետք է ապահովվի տարեկան 160 ժամից ոչ պակաս ծավալով դասախոսների հետ պարապմունքներ անցկացնելը:

5.6.Ուսումնական տարվա արձակուրդները պետք է 7-10 շաբաթ լինեն, այդ թվում՝ 2 շաբաթից ոչ պակաս՝ ձմեռային քննաշրջանից հետո:

6. 310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությանը ճարտարագետ-բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակման և իրականացման պայմաններին ներկայացվող պահանջները

6.1.Ճարտարագետ-բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակմանը ներայացվող պահանջները.

6.1.1.Սույն պետական կրթական չափորոշիչի հիման վրա ԲՈՒՀ-ն ինքնուրույն է մշակում և հաստատում ճարտարագետ-բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացների ուսումնառությունը պարտադիր է, իսկ

նրանց ցանկը երաշխավորական բնույթ է կրում, որը կարող է փոփոխել, կամ լրացնել բու-
հը:

Ուսումնական դասընթացի բաղադրիչների տեսակները (դասախոսություն, գործ-
նական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, տնային և կուրսային աշխատանքների
խորհրդատվություն և այլն) և ծավալները՝ դասընթացին հատկաված դասաժամերի շրջա-
նակում սահմանում է բուհը: Ուսուցման ողջ շրջանում ուսումնական ժամաքանակի ընդ-
հանուր հաշվեկշռում ակտիվ մեթոդներով ուսանողի տեսական ուսուցումը չպետք է ցածր
լինի 25 %-ից:

Ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման համակարգի տեսակն ընտրում է
բուհը: Տվյալ դասընթացից ուսանողի գիտելիքների եզրափակիչ գնահատականը չպետք է
հիմնավորվի միայն վերջին քննության (ստուգարքի) արդյունքով, այլ պետք է հաշվի առ-
նի ուսանողի ակտիվությունը դասընթացից և ընթացիկ առաջադիմությունը կիսամյակի
(ների) ընթացքում: Եզրափակիչ գնահատման դեպքում գնահատականի 40 %-ը ձևավոր-
վում է ընթացիկ առաջադիմությամբ և միջանկյալ ստուգումներով, իսկ 60 %-ը՝ եզրափա-
կիչ քննության (ստուգարքի) արդյունքով:

Քննությունների անցկացման հիմնական ձևը գրավոր կամ գրավոր-բանավոր է:

Բացառության կարգով բուհը կարող է սահմանել բանավոր քննություններ, բայց
դրանք չպետք է

գերազանցեն քննությունների ընդհանուր քանակի 25%-ը: Բուհի իրավունքն է ուսումնա-
կան դասընթացների եզրափակիչ ստուգման եղանակի (ստուգարք կամ քննություն) ընտ-
րությունը և ձևի սահմանումը:

Ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատման համակարգում բուհն օգտա-
գործում է իրեն նպատակահարման գնահատման սանդղակ: Միջազգային մասնագիտա-
կան կրթական համակարգին ինտեգրվելու և ուսանողների ակադեմիական շարժունակու-
թյունն ապահովելու նպատակով ուսումնական գործընթացում գերադասելի է գիտելիքների
ստացման և գնահատման վարկային (կրեդիտային) համակարգի ներդրումը և օգտագոր-
ծումը: Դասընթացից եզրափակիչ գնահատական նշանակելու դեպքում անհրաժեշտ է
անցնել գիտելիքների գնահատման ավանդական համակարգին («գերազանց», «լավ»,
»բավարար«, »անբավարար«, »ստուգված«, »չստուգված«):

Կուրսային աշխատանքը դիտարկվում է որպես դասընթացի ուսումնական բաղադ-
րիչ և իրականացվում է այդ դասընթացին հատկացրած դասաժամերի հաշվին: Հիմնա-
կան մասնագիտական դասընթացներից կուրսային աշխատանքի կատարելը պարտադիր
է, բայց ուսուցման ողջ շրջանում դրանք չպետք է գերազանցեն 5-ը:

Մասնագիտության ուսումնական պլանով (հավելված 2) նախատեսված բոլոր ու-
սումնական դասընթացների, կուրսային աշխատանքների և պրակտիկաների համար
պարտադիր է եզրափակիչ գնահատականի նշանակումը:

Մասնագիտացման դասընթացների կրթաբլոկը ընդհանուր մասնագիտական դա-
սընթացների կրթաբլոկի տրամաբանված հաջորդականությունն է, որը ընտրած մասնա-
գիտությամբ նախատեսված գործունեության բանգավառներում նպաստում է ուսանողի
խոր մասնագիտական գիտելիքների և օգնականությունների ձեռքբերումը: Այն մասնագի-
տությունների գծով, որոնց անվանման մեջ առկա է »կենսագործունեության անվտանգու-
թյան և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում« արտահայտությունը ընտրված
բնագավառի համար շրջանավարտի պատրաստման առանձնահատկությունները առաջին
հերթին հաշվի են առնվում մասնագիտացման դասընթացների միջոցով: Բուհը պետական
կրթական չափորոշիչի հավելված 1-ում տրված ցանկից ինքնուրույն է ընտրում իրեն հա-
մապատասխանող մասնագիտացումը և իրավունք ունի փոփոխելու կամ լրացնելու մաս-
նագիտացման դասընթացների ցանկը, կամ էլ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական
կրթական չափորոշիչը մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեց-
րած՝ ձևավորելու նոր մասնագիտացում:

Ֆակուլտատիվ դասընթացների կրթաբլոկի ցանկը նույնպես երաշխավորական
բնույթ է կրում և ուսանողի համար պարտադիր չէ, իսկ դրանց հաճախելու դեպքում
կրթաբլոկին հատկացրած ժամաքանակների 30 %-ին վերաբերվող դասընթացներից

պարտադիր է ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը:

6.1.2. Մասնագիտության հիմնական կրթական ծրագրին իրականացնելու դեպքում բուհն իրավասու է՝

- 5%-ի սահմաններում փոփոխել դասընթացների կրթաբլոկներին հատկացրած ժամաքանակները, իսկ առանձին դասընթացներինը՝ մինչև 10%-ի սահմաններում;

ձևավորել Հումանիտար և սոցիալ-տնտեսական դասընթացների կրթաբլոկ, որի հանրապետական բաղադրիչում նշվածներից պարտադիր է հետևյալ դասընթացների առկայությունը

“Ֆիզիկական կուլտուրա”

“Հայ ժողովրդի պատմություն”

“Հայոց լեզու և գրականություն”

“Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ”

“Օտար լեզու”

“Փիլիսոփայություն”

“Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների անվտանգության հիմնահարցեր”

Մնացած դասընթացները կարող են ընդգրկվել ըստ բուհի հայեցողության:

Եթե դասընթացը ընդհանուր մասնագիտական կամ մասնագիտացման դասընթացների կրթաբլոկի մի մասն է կազմում, դրա համար հատկացված ժամերի վերաբաշխվում են ՀՄՏ դասընթացների վրա:

Ֆիզիկական կուլտուրայի պարապմունքները հեռակա և դրսեկության ձևերով ուսումնառող ուսանողների համար կարող են իրականացվել նրանց ցանկությամբ:

- իրականացնել 310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությամբ ճարտարագետ-բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը կրճատված ժամկետով՝ համապատասխան ուղղվածության միջինկամ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ուսանողների համար: Ուսուցման ժամկետների կրճատումը կատարվում է մասնագիտական կրթության նախորդ աստիճանում ուսանողների ձեռք բերած գիտելիքների, ունակությունների և հմտությունների հիման վրա: այդ դեպքում ուսուցման տևողությունը 2 (երկու) տարուց պակաս չպետք է լինի: Կրճատված ժամկետով ուսուցումը թույլ է տրվում նաև այն անձանց, որոնց կրթական մակարդակը և բացառիկ ընդունակությունները բավարար հիմք են մման ուսուցում իրականացնելու համար;

- առանձին դեպքում, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող ԿԳՆ գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցված 310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտության համար բուհերն իրավունք ունեն մինչև 20%-ի սահմանում փոփոխել ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ) կրթաբլոկի ժամաքանակը, իսկ առանձին դասընթացները՝ մինչև 40%-ի սահմաններում:

6.2. Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջները.

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք, որպես կանոն ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթության (առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի) և հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: Հատուկ մասնագիտացնող դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան կամ համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքի փոր:

Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները պետք է կազմեն պրոֆեսորադասախոսական կազմի 50 %-ից ոչ պակաս:

Հիմնական հաստիքային դասախոսները և 0,25 հաստիքից բարձր ձևակերպված համատեղողները նույնպես պետք է կազմեն ընդհանուրի 50 %-ից ոչ պակասը:

6.3. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման պահանջները.

Ճարտարագետ-բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ներառի ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր գործնական (սեմինար) աշխատանքների կատարում

Լաբորատոր աշխատանքներ

1. Մշտական աշխատատեղերի սերտիֆիկացումը:
2. Բանվորական գոտու օդի պարամետրերի ուսումնասիրությունը:
3. Արտադրական լուսավորության ստուգումը:
4. Աղմկից պաշտպանվելու մեթոդների և միջոցների արդյունավետության ուսումնասիրությունը:
5. Վիբրացիայից պաշտպանվելու տեխնիկական միջոցների ուսումնասիրությունը:
6. Մեքենաների աղմկային բնութագրերի ուսումնասիրությունը:
7. Էլեկտրամագնիսային ճառագայթներից պաշտպանության տեխնիկական միջոցների և մեթոդների արդյունավետության ուսումնասիրությունը:
8. Ջերմային ճառագայթումներից պաշտպանության տեխնիկական միջոցների և մեթոդների արդյունավետության ուսումնասիրությունը:
9. Իոնիզացնող ճառագայթումներից պաշտպանության միջոցների արդյունավետության ուսումնասիրությունը:
10. Դոզիմետրիկ և քիմիական ստուգման սարքերի օգտագործման կարգը:
11. Էլեկտրասնվտանգության ապահովման միջոցների արդյունավետության ուսումնասիրությունը:
12. Ձեռքի էլեկտրիֆիկացված գործիքի անվտանգության սկզբունքը:
13. Օդային մթնոլորտի կեղտոտվածության ուսումնասիրությունը:
14. Արդյունաբերության կեղտատար ջրերի բնութագրերի ստուգումը և նրանց մաքրման ապարատների ուսումնասիրությունը:
15. Հրավտանգ հեղուկների բռնկման ջերմաստիճանի հետազոտումը:

Գործնական աշխատանքներ

1. Նախագծվող օբյեկտի վնասարար և վտանգավոր արտադրական գործոնների ուսումնասիրությունը:
2. Արդյունաբերության աղբյուրների թույլատրելի սահմանային արտանետումների որոշումը: Ձեռնարկության էկոլոգիական անձնագրի կազմումը:
3. Տեխնոլոգիական գործընթացի էկոլոգիական փորձաքննությունը:
4. Մթնոլորտում արտանետումների մաքրման միջոցների ընտրությունը և հաշվարկը:
5. Կրակմարիչ տեխնիկայի և հակահրդեհային սահագանգման սարքավորումների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը:
6. Արտադրությունում հրդեհային անվտանգության մակարդակի բարձրացման միջոցառումների ներդրման տնտեսական արդյունավետության որոշումը:
7. Աղմկի խլացման միջոցների ընտրությունը և հաշվարկը:
8. Մինչև 1000 վ լարմամբ փոփոխական ցանցերում էլեկտրապաշտպանության համակարգերի հաշվարկը:
9. Հրդեհապայթյունավտանգ օբյեկտների, շենքերի և շինությունների դասակարգումը:
10. Ամպրոպապաշտպանություն, նրա հաշվարկը և նախագծումը:
11. Արտակարգ իրավիճակներում արտադրությունում և վայրերում ճառագայթման դրոշմային որոշումը, այդ գոտիներում մարդկանց գտնվելու թույլատրելի ժամանակի հաշվարկը:
12. Ռ-ադիոակտիվ և քիմիական վարակվածության սահմանների որոշումը:
13. Դժբախտ դեպքերի դասակարգումը, հարցաքննումը, ձևակերպումը և հաշվառումը
14. Բանվորական տեղի սերտիֆիկացումը:
15. Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքների պլանավորումը, կազմակերպումը և փրկարարական գործընթացի անցկացումը:
16. Էկոնոմիկայի օբյեկտում վթարային հետևանքների վերացման պլանի մշակումը:

17. Կենսագործունեության անվտանգության ապահովման իրավաբանական, նորմատիվային և կազմակերպչական հիմունքները: Որպես պարտադիր բաղադրիչ՝ համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ գործնական առաջադրանքների կատարում: Պարտադիր պահանջն է նաև անհրաժեշտ ինֆորմացիոն բազայի ստեղծումը, որն ապահովում է բարձրորակ մասնագետի պատրաստումը և ուսանողի մուտքը տարբեր ինֆորմացիոն աղբյուրներ, ներառյալ internet-ը:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի յուրաքանչյուր ուսանողի մուտքով դեպի գրադարանային ֆոնդեր և տվյալների բազաներ, որոնք ըստ բովանդակության համապատասխանում են հիմնական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների լրիվ ցանկին, նույն դասընթացների բաղադրիչներին (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ, կուրսային և դիպլոմային աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների ծրագրեր) նվիրված մեթոդական ձեռնարկների և ցուցումների առկայությամբ, ինչպես նաև տեսալսողական, բազմամիջավայրային նյութերով և ցուցադրական ձեռնարկներով:

Բուհի գրադարանը պետք է հագեցված լինի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ուսումնամեթոդական համալիրներով, մասնագիտության նորմատիվ-իրավական ակտերով, տեղեկատու գրականությամբ և չափորոշիչներով:

6.4. Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման պահանջները ճարտարագետ-բակալավրի պատաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող բուհը պետք է ունենա նյութատեխնիկական բազա, որը համապատասխանում է գործող սանիտարահիգիենիկ նորմերին և հակահրդեհային կանոններին, ապահովում է օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված լաբորատոր, սեմինար, գործնական պարապմունքների և միջդասընթացային պատրաստման բոլոր ձևերի և ուսանողների հետազոտական աշխատանքների կատարումը:

6.5. Պրակտիկաների կազմակերպման պահանջները

Ուսուցման ընթացքում առանձին մասնագիտական դասընթացների և ընտրած մասնագիտացման գծով գործնական ունակությունների, ապագա աշխատավայրում հմտություններ և փորձառումներ ձեռք բերելու նպատակով բնագավառի կազմակերպարավական տարբեր ձևերի կազմակերպություններում, հիմնարկներում և հաստատություններում կազմակերպվում են ուսանողների ուսումնական և արտադրական (նախադիպլոմային պրակտիկաներ):

Պրակտիկայի վայրերը

1. ՀՀ ԱԻ վարչություն
2. ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության արագ արձագանքման փրկարարական ջոկատ
3. ՀՀ ԱԻ վարչություն ճկնաժամային իրավիճակների որակավորման բարձրացման ինստիտուտ
4. ՀՀ ԱԻ վարչություն “Պետլեռտեխսկում”, “Էներգահսկում”, “Հակահրդեհային պաշտպանություն”, “Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն” կազմակերպությունները
5. Շահումյանի “Ագրոսպասարկում” ԲԲԸ
6. Գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկություններ
7. Մետաղամշակման և փայտամշակման գործարաններ
8. “Հայ Ծառատունկ” ծրագրի ուսումնական կենտրոն:

Ուսանողի նախադիպլոմային պրակտիկան մասնագիտության ուսումնական պլանի պարտադիր բաղադրիչն է, որի կազմակերպման և իրականացման պատասխանատուն բուհն է: Նախադիպլոմային պրակտիկան կազմակերպվում է այն հաշով, որպեսզի շրջանավարտը կարողանա այդ ընթացքում ստացած փորձառությունը օգտագործել իր դիպլոմային նխագծերը ձևավորելիս: Եթե շրջանավարտը ուսուցումը համատեղում է աշխատանքի հետ, բուհն իրավունք ունի թույլատրել աշխատավայրում պրակտիկայի անցկա-

ցումը, եթե շրջանավարտի աշխատանքի բնույթը համապատասխանում է բուհում ուսումնառած մասնագիտությանը:

Պրակտիկան կարող է կազմակերպվել նաև որոշակի կազմակերպություններում՝ նախապես կազմված անհատական ծրագրով, եթե շրջանավարտը նույն կազմակերպությունում պաշտոն է զբաղեցնում:

Արտադրական պրակտիկայի տեղերի բացակայության դեպքում բուհը (ֆակուլտետը) այն կազմակերպում է սեփական նյութատեխնիկական բազային վրա, եթե այն հագեցված է ժամանակակից սարքավորմամբ և ծրագրային միջոցներով:

7. 310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությամբ շրջանավարտի պատրաստման մակարդակին ներկայացվող պահանջները

7.1.Շրջանավարտը պետք է կարողանա լուծել սույն պետական կրթական չափորոշիչի ք.1.2. կետում նշված որակավորմանը համապատասխանող խնդիրները:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը պետք է.

ա/ հումանիտար և սոցիալ-տնտեսական գիտելիքների բնագավառում՝

- իմանա ՀՀ Սահմանադրության և իր բնասավառի օրենքները,
- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին (գրավոր և բանավոր) և հաղորդակցի երկու օտար լոգոներով,
- ունենա պատկերացում առողջ կենսակերպի մասին, տիրապետի ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- իմանա հայ ժողովրդի պատմությունը և արդի քաղաքագիտական զարգացումները,
- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրային, իմանա դրա էթիկական և իրավական նորմերը, որոնք կարգավորում են մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները,
- գիտենա հոգեբանության և մանկավորժության տարրերը,
- ծանոթ լինի ժամանակակից փիլիսոփայական ուղղություններին, գիտենա կենցառության մասին գիտության հիմնադրույթները, նյութականի և վերացականի հասկացությունները, մատերիայի կազմակերպման ձևերը, հետևի սոցիալական գլոբալ զարգացումներն,
- գիտենա տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրո- և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առարնձնահատկությունները:

բ/բնագիտության և մաթեմատիկայի բագավառում՝

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին,
- տիրապետի մաթեմատիկայի հիմնական բաժիններին, հավանականությունների տեսության և

մաթեմատիկական վիճակագրության մեթոդներին, մաթեմատիկական մոդելավորման եանակներին,

- տիրապետի ինֆորմացիայի հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներն և կարողանա օգտագործել ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներ:

գ/մասնագիտական գործունեության բնագավառում պետք է կարողանա լուծել՝

- Բնակչության պաշտպանության միջոցառումների պլանավորումը,
- անվտանգ և առողջական պայմանների ստեղծումը աշխատանքային պայմաններում,
- քաղ. պաշտպանության բոլոր տեսակի միջոցառումների ապահովման իրագոր-

ծումը,

- փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների կատարումը արտակարգ իրավիճակներում,
- տուժված բնակչության առաջնահերթ կենսագործունեության կազմակերպումը արտակարգ իրավիճակներում,
- նախագուշակյան աշխատանքների կազմակերպումը և անցկացումը վտանգավոր օբյեկտների գոտիներում գտնվող քաղաքացիներին դժբախտ դեպքերից զերծ պահելու համար,
- էկոնոմիկայի օբյեկտների անձնագրումը աշխատանքի անվտանգության, բնապահպանության և քաղ. պաշտպանության տեսակետից,
- տարածաշրջանի ուսումնասիրության կազմակերպումը, ինչպես նաև եղած վտանգավոր օբյեկտների և սպասելիք երևույթների ճշգրիտ նկարագրումը,
- դժբախտ դեպքերի փորձաքննությունը արտադրություններում և արտակարգ իրավիճակներում

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի հատուկ պատրաստությանը վերաբերվող պահանջները սահմանում է տվյալ մասնագիտացումն առաջադրող բուհը՝ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած, որոնք ՀՀ ԿԳՆ-ում մասնագիտացումը հաստատելուց հետո միասնական են դառնում այլ բուհերի համար, բխում են մասնագիտացման կրթաբլոկի բովանդակությունից և տվյալ մասնագիտացմամբ մասնագետներ պատվիրած կազմակերպության գործառնություններից:

Նշված փորձառությունները ներառում են՝

- հետազոտական աշխատանք վարելու, վերացական տրամաբանական մտածողության ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները կիրառելու և քննադատական վերլուծության ունակություններ,
- անձանոթ պայմաններում առաջացած ոչ կոնստրուկտիվ հիմնահարցերի բացահայտման, հաղթահարման և վերջնական լուծման, սեղմ ժամանակացույցով աշխատանքներ կազմակերպելու ընդունակություն,
- մասնագիտական գործունեության բնագավառում նորամուծությունների նկատմամբ ընկալունակության ցուցաբերում:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի՝ մարդկանց հետ աշխատելու փորձառությունը ենթադրում է նրա ունակությունները՝

- այլ անձանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու,
- խնդիրներ ձևավորելու և դրանք ենթակառուցված պարզաբանելու,
- մարդկանց ստեղծագործական աճի ձգումը խրախուսելու և զարգացումն ապահովելու,
- ծագած տարաձայնությունները և բախումները լուծելու,
- տարբեր զարգացման և մտավոր մակարդակի տեր մարդկանց հետ համագործակցելու,
- մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների հասնելու նպատակով բանակցություններ վարելու,
- տարաբնույթ և տարասեռ մշակութային միջավայրերում աշխատելու և այլն:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի ինֆորմացիայի հետ աշխատելու փորձառությունը պահանջում է պարտադիր հմտություններ՝

- պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում սեփական կարծիքը գրավոր և բանավոր ձևերով շարադրելու, քննարկելու և գործուն կարգով պաշտպանելու,
- լեզվական և մշակութային տարբերությունների հաշվառմամբ գրավոր ինֆորմացիան լսելու և վերլուծորեն ընկալելու,
- բանավոր, տպագրված և էլեկտրոնային աղբյուրներից ստացված ինֆորմացիան որոնելու, ստանալու, համակարգելու, գրավոր ձևակերպելու և օգտագործելու:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման գծով

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը պետք է ծանոթ լինի տվյալների մշակման

երկուսից ոչ պակաս համակարգերի, համակարգչային և բազմաօգտագործման տեղային ցանցային համակարգերին, ինչպես նաև կարողանա կատարել ինֆորմացիայի որոնում տվյալների ցանցային բազաներում (www), օգտվել էլեկտրոնային փոստից, տվյալների բազաների փաթեթից:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրը պետք է հասկանա իր մասնագիտության էությունը և սոցիալական նշանակալիությունը, իր որակավորման շարունակական բարձրացման անհրաժեշտությունը հետբուհական և լրացուցիչ կրթություն ստանալու, կամ էլ նոր գիտելիքների ինքնուրույն տիրապետման միջոցով:

7.2.Բակալավր -ճարտարագետի եզրափակիչ պետական որակավորման պահանջները

7.2.1. 310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի եզրափակիչ պետական որակավորումը ներառում է ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի պաշտպանությունը և պետական քննության հանձնումը, որոնք թույլ են տալիս բացահայտելու շրջանավարտի տեսական և գործնական պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

7.2.2. Տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքին ներկայացվող պահանջները.

310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտությամբ տեխնիկայի և տեխնոլոգիայի բակալավրի ավարտական որակավորման (դիպլոմային) նախագիծն ավարտուն մի մշակում է, որը կատարված է մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան և նպատակ ունի ամրապնդել և ընդլայնել շրջանավարտի տեսական և գործնական գիտելիքները: Այն ուղղված է արտակարգ իրավիճակների առաջացման հավանականության նվազեցմանը, վնասակար ազդեցության գոտիների լոկալիզացմանը, աղետների և վթարների հետևանքների իջեցմանը և վերացմանը, ինչպես նաև մարդու անվտանգության և առողջական վիճակի պահպանմանը աշխատանքային գործունեության ոլորտներում: Բովանդակային առումով ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքը պետք է՝

- ներկայացնի որպես կենսագործունեության անվտանգության բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերող տեսական, վերլուծական, սոցիալ-տնտեսագիտական կամ փորձարարական հետազոտություն, որում շրջանավարտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, որոնք թույլ են տալիս ինքնուրույն լուծելու մասնագիտական բնույթի խնդիրներ,

- ցույց տա շրջանավարտի կողմից գիտական և համակարգչային վերլուծության մեթոդների յուրացման աստիճանը, ունակությունը կատարելու տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ, հիմնավորված առաջարկություններ և երաշխավորություններ բնագավառի հիմնահարցերի լուծման կատարելագործման վերաբերյալ,

- կրի ստեղծագործական բնույթ՝ հավաստի վիճակագրական տվյալների օգտագործմամբ,

- բացահայտի շրջանավարտի պատրաստության աստիճանը ինքնուրույն աշխատելու արտակարգ իրավիճակների և աշխատանքի պաշտպանության ոլորտներում,

- համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա,

- արտացոլի շրջանավարտի ունակությունը օգտագործելու տեղեկատվության որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները, աշխատել բնագավառի նորմատիվ-իրավական ակտերի հետ,

- ձևավորված լինի հրատարակչական արդի նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ունենա հետազոտական աշխատանքի հաշվետվությանը բնորոշ

կառուցվածք և 60-70 էջ համակարգչային շարվածքի ծավալ:

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքների թեմատիկան սահմանում է մասնագիտացնող ամբիոնը: Թեմատիկայում պարտադիր կարգով պետք է ներառվեն՝

էկոնոմիկայի օբյեկտներում աշխատակազմի անվտանգության և սանիտարական պայմանները, կենցաղում և շրջակա միջավայրում բնակչության կենսագործունեության անվտանգության ապահովումը բնական և տեխնածին աղետներից և վթարներից, ինչպես նաև նախագուշակական միջոցառումների, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների տեխնոլոգիայի մշակման և տեխնիկայի շահագործման առաջնահերթ և հրատապ հարցերը հաշվի առնելով բուհի (ֆակուլտետի) ընտրած մասնագիտացումները և ընտրովի դասընթացների բովանդակությունը ըստ կրթաբլոկների

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի կառուցվածքում պետք է ներառվեն հետևյալ բաժինները՝

- ներածություն
- գրականության ակնարկ
- նախագծի արդիականությունը, նպատակը և խնդիրները
- մարդու գործունեության միջավայրում (արտադրական, կենցաղային բնության) և բնակավայրի պայմաններում (նորմալ, արտակարգ) վտանգների ուսումնասիրությունը
- տեսական ուսումնասիրությունները
- լաբորատոր և դաշտային փորձերի կատարման մեթոդիկան և արդյունքները
- նախագծի տնտեսական հիմնավորում
- բնապահպանության հարցերի մշակումը
- առաջարկությունները և եզրակացությունը
- օգտագործված գրականությունը

7.2.3. Պետական քննությանը ներկայացվող պահանջները.

Եզրափակիչ որակավորման (պետական) քննության բովանդակությունը, անցկացման ձևը և ուսանողների գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է բուհը (ֆակուլտետը) և հաստատում բուհի գիտական խորհուրդը: Նրանում պարտադիր կարգով ներառում են հարցեր մասնագիտության հետևյալ հիմնական ուսումնական դասընթացներից՝

1. Անվտանգությունը արտակարգ իրավիճակներում
2. Արտակարգ իրավիճակների կառավարում
3. Վթարային փրկարարական աշխատանքների կազմակերպումը և անվտանգությունը
4. Ռադիացիոն պաշտպանությունը և գյաղատնտեսության վարումը ռադիաց. աղտոտվածության պայմաններում
5. Քիմիական պաշտպանություն
6. Արտադրական անվտանգություն և աշխատանքի պաշտպանություն
7. Արտադրական սանիտարիա և աշխատանքի հիգիենա

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարությանն առընթեր
310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում մասնագիտության պետական կրթական չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի աշխատանքային խումբը

ՀՀ և ՀԿ ֆակուլտետի դեկան, պրոֆ.

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

ՀՀ և ՀԿ ֆակուլտետի դեկանի տեղակալ

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

ՀՏԿ և մելիորացիայի ամբիոնի պրոֆ.

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Հողաշին. և հողային կադաստրի ամբ. վարիչ, դոց.

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Կենսագործ. անվտանգության վարիչ, դոց.

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Կենսագործ. անվտանգության ամբիոնի պրոֆ.

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Նյութերի դիմադրության և ճԿ ամբ. վարիչ, պրոֆ.

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Հայոց պատմության և փիլիսոփ. ամբ. վարիչ, դոց.

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Ս. Ս. Ղազարյան

անուն, ազգանուն

Հ. Կ. Պողոսյան

անուն, ազգանուն

Գ. Ս. Եղիազարյան

անուն, ազգանուն

Պ. Ս. Էֆենդյան

անուն, ազգանուն

Հ. Թ. Հակոբյան

անուն, ազգանուն

Հ. Ս. Սարգսյան

անուն, ազգանուն

Ռ. Ս Մինասյան

անուն, ազգանուն

Բ. Ա. Խաչատրյան

անուն, ազգանուն

անուն, ազգանուն

310511–Կենսագործունեության անվտանգությունը և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում

դասիչ մասնագիտության անվանումը

մասնագիտության պետական կրթական չափորոշիչը քննարկվել և հաստատվել է

պետական կրթական չափորոշիչները մշակող

մասնագիտության ուղղությունը

գիտամեթոդական հանձնաժողովի 2008թ հունիսի 4-ի նիստում(արձանագրություն թ.14):

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՊԱՀ ռեկտոր, պրոֆեսոր

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Ա. Պ. Թարվերդյան

անուն, ազգանուն

« _____ » _____ 200__ թ

Համաձայնեցված է.

ՀՀ ԿԳՆ բարձրագույն և հետբուհական

մասնագիտական կրթության վարչության պետ՝

գիտ.աստիճանը կոչումը

անուն,ազգանուն

« _____ » _____ 200__ թ.

